Azg Ազգ

2 ՓԵՏՐՈՒԱՐ 2013 ՇԱԲԱԹ 10(5093)

ISSN: 1829-1651

Ինքնասպան է եղել 22-ամյա զինծառայողը

Հունվարի 31-ին՝ ժամը 22-ի սահմաններում, Հայաստանի զորամասերից մեկի կապի վաշտի զինանոցում, ըստ նախնական տվյալների, ինքնաձիգով ինքն իրեն մահացու հրազենային վերք է հասցրել նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Վարդան Ալբերտի Այվազյանը: Պաշտպանության նախարարությունից «**Ազգ**»-ին հայտնում են, որ 22-ամյա Ալբերտը բանակ էր զորակոչվել 2012-ի գարնանային զորակոչով՝ Նոր Նորքի զինկոմիսարիատից: Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ ՀՀ ՔՕ 110 հոդվածի 1-ին մասով՝ ինքնասպանության հասցնելու հատկանիշներով: Կատարվում է նախաքննություն:

ՕՐԵՐԻ ՀՇՏ

Ընդդեմ դավադիրների

Երիցս ճիշտ էր մեր փորձառու ռազմական գործիչներից Վազգեն Մանուկյանը, երբ «Արմնյուզ» հեռուստաընկերությանը երեկ տված հարցազրույցում հռետորական հարց էր հնչեցնում՝ նախորդ գիշեր դարանակալ արձակված կրակոցները Պարույր Հայրիկյան անձի՞, թե՞ նախագահական թեկնածուի դեմ էին: Դրանով նա բացառում էր նաեւ այն վարկածը, իրավացիորեն, որ մահափորձը կարող է անձնական դրդապատճառներ ունենալ: Բնականաբար, անձնական հակառակորդը չպիտի սպասեր ենթակայի նախագահական թեկնածու դառնալուն...

Կմնա մահափորձի վարկածներից մյուս խումբը՝ դավադրություն: Ներքին կամ արտաքին դրդապատճառներով եւ կազմակերպմամբ:

Այո, բնավ չի կարելի բացառել ներքին դավադրության վարկածը, որքան էլ որ ցանկալի չէ այդ ուղղությամբ կասկածելը: Բայց ո՞վ ասաց, որ Հայաստանում ամեն որ գոհ է նախընտրական հանգիստ, վերահսկելի ու տեսանելի մթնոլորտից: Իսկ եթե մահափորձը հասներ իր նպատակի՞ն: Ուրիշ դավադիր ի՞նչ քայլեր ու գործողություններ էին հաջորդելու դրան, տապալելով նախընտրական եւ ընտրական ողջ գործընթացը, ստեղծելով սահմանադրական վակուում, ավելին՝ քաոս: Համարյա հոկտեմբերի 27-ի իրավիճակի կրկնություն, որն այս անգամ հաղթահարելը թերեւս լիներ անկարելի:

Այսուհանդերձ, չգիտեմ ինչու, ինքս հակված եմ կասկածելու արտաքին դավադրության վրա: Երեւի նրա համար, որ թեկուզ ձախողված՝ մահափորձն արդեն հասել է իր նպատակին՝ մթագնել նախընտրական մթնոլորտը, անվանարկել Հայաստանը, վարկաբեկել նրա հեղինակությունը, միջազգային վարկը: Համոզել միջազգային հանրությանը, նաեւ մեզ, որ Հայաստանը ի վիճակի չէ, չի՛ կարող ժողովրդավարական սկզբունքներով, հանգիստ եւ առողջ պայմաններում ընտրություններ անցկացնել – սա՛ է այն պիտակավորումը, որին ձգտում էր օտար դավադիր կողմը եւ որը արդեն արձանագրվեց միջազգային մամուլում եւ զեկույցներում:

Հետեւությունը այս բոլորից՝ պարփակել հասցված վնասը, իմաստուն կերպով կարգավորել տագնապը, երեւան հանել դավադիրներին, կարճ ընդմիջումից հետո ավելի հանգիստ ու պատասխանատու անցկացնել ընտրությունները, ցույց տալ բոլորին համաժողովրդային մեր կամքը՝ դեպի ժողովրդավարություն, դեպի առաջադիմություն, դեպի արտաքին ու ներքին աղահովություն տանելու մեր երկիրը, պետականությունը:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

Պարույր Հայրիկյանը լավ է զգում
Նախագահական ընտրությունները կհետաձգվեն 15 օրով

ՀԱՄԼԵԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արդեն երկրորդն օրն է՝ Տպագրիչների 9 հասցեն մարդաշատ է: Տարածքը դեղին ժապավենով շրջափակված է, ոստիկաններով շրջապատված: Տարածքի բնակիչներից շատերը դեռ չեն հասկանում, թե նախորդ գիշեր ի՞նչ տեղի ունեցավ եւ ինչո՞ւ: Հունվարի 31-ի գիշերը՝ ժամը 23:30-ին նախագահի թեկնածու, ԱԻՄ առաջնորդ Պարույր Հայրիկյանի վրա կատարված մահափորձը ցնցել է հասարակությանը: Անկախ կուսակցական եւ գաղափարական պատկանելությունից, Հայրիկյանը Հայաստանում գնահատված եւ հարգված անձնավորություն է: Նա ասոցացվում է անկախության հետ եւ անկախության համար մղվող պայքարի մոհիկաններից է, որ տարիներ շարունակ պայքարել է խորհրդային ռեժիմի դեմ, եղել է այլախոհ եւ փափագել ազատություն:

«Հայրիկյանը թշնամիներ չուներ»: Երեկ հավաստիացնում էին

նրան ընկերներն ու մտերիմները: Հայրիկյանի ընկերներից **Վարուժան Տեր-Սիմոնյանը** հիշում է, որ դեպքի օրը կամ դրանից առաջ Հայրիկյանը որեւէ սպառնալիք կամ կասկածելի զանգեր չի ստացել: «Եթե ստանար, անպայման կտեղեկացներ»:

Սա կենցաղային վեճի կամ թշնամանքի արտացոլում չէ, հավաստիացրել է նաեւ Հայրիկյանը: ԱԺ փոխխոսնակ Էդուարդ Շարմազանովի հետ հանդիպմանը Հայրիկյանը պատմել է, որ մեքենայից իջնելուց, երբ մոտեցել է շենքի շքամուտքին, նկատել է ինչ-որ մեկի, երբ թեքվել է ու պարզել ձեռքը, հանցագործը կրակել է: «Իմ ձեռքից իր մարմնի հեռավորությունը 20-30 սմ էր, դեմքը տեսել եմ, բայց չեմ հիշում», Հայրիկյանի խոսքերն է փոխանցում Էդուարդ Շարմազանովը: Ստացվում է, որ Հայրիկյանի մահափորձը քաղաքական շարժառիթով է կամ փորձ՝ հանգիստ եւ առանց լարվածության քարոզարշավի ընթացքը շեղելու եւ պետության վարկանիշին վնաս հասցնելու համար: Այս մահափորձն ամենամեծ հարվածը հասցրեց հենց իշխանություններին ու նախագահի վարկանիշին: Համաձայն սահմանադրության, եթե նախագահի թեկնածուներից մեկն անհաղթահարելի խոչընդոտներ է ունենում, ապա նախագահական ընտրությունները հետաձգվում են երկու շաբաթով, իսկ եթե ավելի երկար՝ ապա նշանակվում են նոր ընտրություններ:

Տես էջ 3

Չորս «հայկական» հարց՝ ԱՄՆ նորանշանակ պետքարտուղարին

Հ. ԱՓՅԱՆ

Երեքշաբթի օրը ԱՄՆ Սենատը ձայների 94 կողմ, 3 դեմ հարաբերակցությամբ ԱՄՆ պետքարտուղարի պաշտոնում հաստատեց Մասաչուսետս նահանգից նախկին սենատոր, այս տարի իր 70-ամյակը բոլորող Ջոն Քերրիի թեկնածությունը: Հիշեցնենք, որ սենատոր Քերրին պաշտպանել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող ամերիկյան օրինագիծը: Ինչպես փոխանցում է ԱՄՆ-ում լույս տեսնող «Ասպարէզ» թերթը՝

վկայակոչելով տեղի Հայ դատի գրասենյակի տարածած հայտարարությունը, Սենատում Քերրի հետ տեղի ունեցած հարցուպատասխանի ժամանակ սենատորներ Ռոբերտ Մենենդեսն ու Բարբարա Բոքսերը եւս հարցեր են ուղղել հավանական պետքարտուղարին: Այդ հարցերից մեկում մեջբերվել են անցյալ դարասկզբին Օսմանյան կայսրությունում ամերիկյան դիվանագետների՝ Վաշինգտոն ուղարկած պաշտոնական գրառումներն ու նամակները, որոնցով ապացուցվում է, փաստորեն, Հայոց ցեղասպանությունը, ապա հետեւել է հարցադրումը. «Ինչպե՞ս է պետքարտուղարությունը վերաբերվում այդ ժամանակ կատարված իրադարձություններին»:

Տես էջ 8

Ահաբեկչական պայթյուն Անկարայի ամերիկյան դեսպանատանը

Պայթյունը տեղի է ունեցել ցերեկը, ԱՄՆ դեսպանատան մուտքի մոտ: Դա իրականացրել է ինքնությունը դեռեւս չճշտված մահապարտը՝ քաշելով իր վրա ամրացված ռումբի պատրույգը: Պայթյունի հետեւանքով մահապարտի հետ սպանվել է դեսպանատան անվտանգությունն ապահովող թուրք ոստիկանը, վիրավորվել է երեք մարդ, մեկը՝ լրագրողուհի է, որին տեղափոխել են հիվանդանոցի վերակենդանացման բաժին: Պայթյունը լուրջ ավերվածություն է պատճառել դեսպանատան մուտքին:

Իսկույն արձագանքելով պայթյունին, ինչպես CNN-Turk-ն ու թուրքական NTV-ն են նշում, վարչապետ Էրդողանը հայտարարել է, որ դա ուղղված է Թուրքիայի դեմ, նախաձեռնողը՝ երկրի անդորրը խաթարելու միտում ունեցող ահաբեկիչներն են (ակնարկը PKK-ի մասին է), սակայն իրենք ազգային արժեքներին տեր կանգնելու պայմանով երկրում ամրապնդելու են եղբայրությունը (նկատի ունի քրդերին):

Էրդողանին հավելել է ներքին գործերի նորանշանակ նախարար Մուամմեր Գյուլերը: Նա կարծիք է հայտնել, որ մահապարտը եղել է տղամարդ, ամենայն հավանականությամբ թուրք, բացահայտելու են բոլոր կազմակերպիչներին: Այդ ընթացքում հայտարարությամբ հանդես է եկել Թուրքիայում ԱՄՆ դեսպանությունը. «Դեսպանատան առջեւ տեղի ունեցավ հզոր պայթյուն: Իրականացրել ենք անվտանգության արտակարգ միջոցառումներ, շնորհակալություն ենք հայտնում թուրք ոստիկանությանը՝ անհապաղ միջամտելու համար»:

Մինչ Էրդողանը պայթյունը պայմանավորում էր «քրդական ահաբեկչության» հետ, իսկ ներքին գործերի նախարարը մահապարտին թուրք անվանելով նկատի էր առնում նրա թուրքական քաղաքացիությունը, լրատվամիջոցները «Դունյա բյուլթենի» կայքէջի գլխավորությամբ սկսեցին լուրեր տարածել, թե մահապարտը Ժողովրդի ազատագրության հեղափոխության կուսակցություն-ճակատի անդամ է, որպեսզի հիմնավորեն նրա ենթադրյալ կապը քրդական մեկ այլ կազմակերպության՝ PKK-ի հետ:

Հ. Ջ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նախագահական նախընտրական քարոզարշավի եռուն շրջանում, երբ ամեն ինչ ընթանում էր հանգիստ, խաղաղ, հանդուրժողական ու գործնական մթնոլորտում, երբ կային բոլոր հնարավորությունները վերջապես Հայաստանում ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար, Տպագրիչների փողոցում նախագահի թեկնածու, ԱԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանի ուղղությամբ արձակած կրակոցները խաթարեցին այդ բնականոն ընթացքը: Այս ամենը հարցեր են առաջացնում ու վնաս հասցնում ՀՀ հեղինակությանը, սասանում հայ ժողովրդի բարի համբավն ու վարկը միջազգային կառույցներում:

Ռամկավար Ազատական կուսակցությունը դատապարտում է կատարված քննելի արարքը, այն որակում վտանգավոր ու վիրավորական, որն ուղղված է նաեւ ՀՀ պետականության, ներկա իշխանությունների եւ, ընդհանրապես, հայ ժողովրդի հասցեին եւ համապատասխան կառույցներից պահանջում՝ կարճ ժամկետում բացահայտել ոչ միայն հանցագործությունը կատարողներին, այլեւ նրանց թիկունքում կանգնած բոլոր ուժերին եւ պատժել օրենքի ողջ խստությամբ:

Ռամկավար Ազատական կուսակցությունը գտնում է, որ այլեւս անցել են կրակոցներով հարցեր լուծելու ժամանակները, եւ բոլոր նրանք, ովքեր հույս ունեն նման անմարդկային մեթոդներով խաթարել հանրապետության գործնական ու կայացող ժողովրդավարության միջավայրը, պատասխան պիտի տան օրենքի տառին համապատասխան:

Ռամկավար Ազատական կուսակցությունը շուտափույթ առողջացում է մաղթում Պարույր Հայրիկյանին եւ ցանկանում, որ նա հնարավորինս կարճ ժամանակահատվածում վերադառնա ակտիվ քաղաքական կյանք:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳ

Ընթացիկ

Ստամբուլում ոչ թե մեկ, այլ երկու հայ կին է սպանվել

Առաջին սպանությունը, սակայն, ինչպես խոսքովանել է ոստիկանությունը, «վրիպել» է ուշադրությունից

Հունվարի 30-ի համարում «Սամաթիայի հարձակումները Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի յուրահատուկ պատրաստությունն են» վերնագրով **«Ազգում»** այդ հարձակումներին անդրադառնալիս նշել էինք, որ ձեռքի տակ եղած ինֆորմացիան կցկտուր է ու թերի: Հիմա արդեն պարզորոշ կարելի է ասել, որ դա նաեւ աղավաղված է:

Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ դեկտեմբերի 28-ին Սամաթիայում մարդասպանը Մարիցա Քյուչուքին սպանելու փոխարեն եթե վնասվածք հասցներ, զառամյալ հայ կանանց նկատմամբ Ստամբուլի հայաբաս թաղամասերում, մասնավորապես նաեւ Ֆերիքյոյում, որը Շիշլիի վարչական տարածքում է, իրականացվող հարձակումների լուրը չէր տարածվի: Մարդու իրավունքների միության Ստամբուլի մասնաճյուղը չէր ունենա հարձակումներին հակազդելու հնարավորություն, ոչ էլ «Ազատություն եւ համերաշխություն» կուսակցությունն ու «Ժողովուրդների դեմոկրատական կոնգրեսը» բազմաթիվ հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ բողոքի ցույցերով հենց Սամաթիայում կկարողանային դատապարտել չարանենգ այդ հարձակումները:

Այդ դեպքում արդեն Ժողովրդա-հանրապետական կուսակցության փոխնախագահը հարցումով չէր դիմի Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահություն: Այսպիսով Ստամբուլի նահանգապետը եւ Սամաթիայի թաղամասը ներառող «Ֆաթիհ» վարչական տարածքի քաղաքապետը կձերբազատվեին հարձակումներին թեկուզ 2 ամիս ուշացումով արձագանքելու տհաճ պարտականությունից: Էլ չենք խոսում արձագանքի բովանդակության մասին, որը ռասիստական բնույթը «բացառելու» միջոցով հարձակումների կազմակերպվածությունը ողողակելու հայաստյաց թուրք մարդասպանին յուրահատուկ ստորության հերթական դրսեւորումն է:

Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ զառամյալ հայ կանանց նկատմամբ առաջին հարձակումը, չնայած դեկտեմբերի սկզբներին իրագործման պաշտոնական հայտարարություններին, կատարվել է նոյեմբերի 28-ին: Դեռ ավելին, դաժան ծեծի ենթարկված զոհը կորցրել է տեսողությունը, հավանաբար գլխին ստացած ուժգին հարվածների հետեւանքով: Հարվածել գլխին 87-ամյա կնոջը մինչեւ տեսողության կորուստը, անմարդկային երեւույթ է, իսկ օրերը միտումնավոր խառնելով պղտոր ջրում ձուկ որսալը՝ ստորություն:

Ինչպես երեւում է, թուրքական պետական մարմինների ստորությունը սոսկ պղտոր ջրում ձուկ որսալով չի սահմանափակվում, քանի որ նրանք ամսաթիվը միտումնավոր խառնելուց զատ, սպանվածին էլ վիրավորի հետ են խառնել: Սպանվածի պարագայում խոսքը դեկտեմբերի 17-ին Շիշլի վարչական տարածքին մաս կազմող Ֆերիքյոյում հարձակման ենթարկված 80-ամյա հայ կնոջ մասին է:

Այլ կերպ, Ֆերիքյոյում եւ Սամաթիայում հարձակման թիրախ է դարձել 5 հայ կին, ոչ թե 4, թիրախներից սպանվել է երկուսը, այլ ոչ թե մեկը, ինչպես ներկայացվում էր: Սա նշանակում է, որ թուրքական պետական մարմինները հարձակման 4 թիրախ նշելով փորձել են ողողակել Ֆերիքյոյում կատարված սպանությունը: Տեսնելով, որ դա չի հաջողվում, սպանվածին ներկայացրել են որպես վիրավոր: Այդ մասին երեկ, առանց սպանության վայրը մանրամասնելու, կայքէջում գրել էր թուրքական NTV-ն, իսկ «Ակսը» հավելել էր, որ սպանությունը տեղի է ունեցել Ֆերիքյոյում:

Ավելին, ոստիկանությունը միջադեպի առնչությամբ «Ակսին» պարզաբանումներ է տվել եւ խոսքովանել, որ Ֆերիքյոյում բնակվող միայնակ կինը նույն ձեւով է սպանվել, ինչ Մարիցա Քուչուքը, սակայն վրիպել է ուշադրությունից: Հիշեցնենք, որ չարագործը հենց բնակարանում դաժան ծեծի է ենթարկել տկն Մարիցային, դաբյունի 7 հարված հասցնելուց հետո կտրել է նրա կոկորդը:

Եթե Ֆերիքյոյի սպանությունը նույն ձեւով է կատարվել, ապա ոստիկանությունը զոհի բնակարանում պետք է գտած լինի դաժան ծեծի ենթարկված, դաբունահարված եւ կոկորդը կտրած դիակ: Մարդասպանը 80-ամյա տարեց կնոջը սպանելիս էլ ի՞նչ դաժանություն պիտի գործադրեր, որ սպանությունը արժանանար ոստիկանության ուշադրությանը: Քանի որ չի արժանացել, այլ ինչպես ոստիկանությունն է խոսքովանում, ուշադրությունից վրիպել է, ուստի ոստիկանությունը մարդկություն չունի, կամ էլ ոստիկանը որպես թուրք չի կարողանում հաղթահարել հայատյացության անասնական բնազդը:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԻՆ

Մրցանակ «Ակսին»

«Ժամանակակից լրագրողներ» թուրքական կազմակերպությունը հատուկ մրցանակ է հանձնել Ստամբուլում լույս տեսնող հայկական «Ակս» շաբաթաթերթին ու նրա լրագրողներից մեկին: «Արմենպրեսից» տեղեկացանք, որ կազմակերպությունը «Ակսին» մրցանակ է շնորհել «Չնայած ճնշմանն ու դժվարություններին՝ սկզբունքային հրապարակումները շարունակելու համար եւ ի հիշատակ Հրանտ Դինքի»:

Մրցանակ է շնորհվել նաեւ «Ակս» պարբերականի լրագրող Ֆունդա Թոսունին՝ նրա հրապարակած «Նախազգուշացում Դինքին անմեղ անվանող դատավորին» հոդվածի համար:

«Ժամանակակից լրագրողներ» կազմակերպությունը, որը հիմնադրվել է 1978-ին, իր առջեւ նպատակ է դրել թույլ չտալ, որ լրագրությունը վերածվի զենքի՝ անձնական շահերի ու նպատակների համար:

ՀԱՆԳԻՊՈՒՄ

Նախարար Օհանյան. Պետք է քրտինք թափել, որ վաղն արյուն չլինի

«Այսօր մենք գտնվում ենք մի փուլում, որը ոչ պատերազմ է, ոչ խաղաղություն: Ասում են, որ զինադադար է, բայց այդ համաձայնագիրը խախտվում է», երեկ «Սինոփսիս Արմենիա»-ում ուսանողների հետ հանդիպմանն ասաց պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Նախարարի ներկայացմամբ՝ Ադրբեջանը փորձում է միակողմանի պարտադրանքի դիմել՝ ռազմական հռետորաբանությամբ, տարբեր արտահայտություններով, սպառազինության մրցավազքով ու բյուջետային հիստերիայով: «Այդ ամենը խոսում է այն մասին, որ իրենք, իրոք, պատրաստվում են պատերազմի: Բայց այս ամենի առկայության պայմաններում առաջին գծում համեմատելով մեր ունակություններն ու ոգին, ես գալիս եմ այն եզրակացության, որ դրանց մի մասը հենց այնպես խոսքեր են»:

Օհանյանի գնահատմամբ՝ առաջին գծում գտնող հայ զինվորն այժմ պարտադրողի դերում է, եւ ամեն ինչ արվելու է, որ այդպես լինի միշտ: Նախարարի խոսքով՝ նախորդ տարին առանձնացել է սահմանին առկա լարածությամբ, դիվերսիոն-հետախուզական գործողություններով: «Ցավալի է, որ մենք տարվա ընթացքում ունեցանք կորուստներ, սակայն անհամաչափ պատասխանների միջոցով՝ 5-6 անգամ ավելի խիստ պատժեցինք հակառակորդին, որ էլ չհանդգնի կրկնել», ասաց Օհանյանը:

Շեշտելով, որ աղրում ենք դժվարին ժամանակահատվածում, նախարարը չի կասկածում, որ հայ երիտասարդը կպահպանի իրեն վստահված երկրի անվտանգությունը: «Պետք է քրտինք թափել, որ վաղը արյուն չլինի», ասաց նախարարը:

Հ. Հ.

Փոխհատուցվելու են սիրիահայերի բնակարանային վարձավճարները

ՀՀ սփյուռքի նախարարությունում տեղի ունեցավ Հայաստանի մարզերում բնակվող սիրիահայերի հանդիպումը Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնադրամի տնօրեն **Ֆելիքս Սիմոնյանի հետ, սիրիահայերի խնդիրների լուծմանն աջակցելու նպատակով:**

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածության համաձայն՝ ընարկվեց հիմնադրամի նախաձեռնությամբ Հայաստանի մարզերում վարձակալությամբ բնակվող սիրիահայերի բնակարանային վարձավճարների փոխհատուցման հարցը: Հայաստանի մարզերում բնակվող 11 սիրիահայ ընտանիքներ աջակցություն ստանալու նպատակով դիմել էին ՀՀ սփյուռքի նախարարություն:

Ֆելիքս Սիմոնյանը նշեց, որ հիմնադրամի կողմից տրամադրվող օգնության չափը կազմում է 5 մլն ՀՀ դրամ: Փոխհատուցվելու են սիրիահայ այդ ընտանիքների դեկտեմբեր, հունվար եւ փետրվար ամիսների բնակարանային վարձավճարները: Նա հավաստիացրեց, որ վարձավճարների փոխանցումը կկատարվի առաջիկա 4-5 օրերի ընթացքում, եւ որ հիմնադրամի կողմից աջակցությունը շարունակական բնույթ է կրելու:

Խորհրդակցության ժամանակ հիմնադրամի տնօրենին փոխանցվեցին սիրիահայերի բանկային հաշվեհամարները:

ՏԱՍՏԱՌՈՏ

Եվս 45 մլն դոլար Հայաստանի ճանապարհների վերականգնմանը

Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհուրդը հաստատել է կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի շրջանակներում Հայաստանին 45 մլն դոլար վարկի տրամադրումը: Այդ մասին երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ հայտնեց ՀԲ երեւանյան գրասենյակի ղեկավար **Ժան Միշել Հափին**: Նա նշեց, որ գումարը կուղղվի 170 կմ կենսական նշանակության ավտոճանապարհների վերականգնմանը, միեւնույն ժամանակ աշխատատեղեր ստեղծելով հիմնականում գյուղական ազգաբնակչության համար: Կվերականգնվեն Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու եւ Սյունիքի մարզերի 31 համայնքներով անցնող ճանապարհները: Այս վարկը տրամադրվել է 25 տարի մարման ժամկետով եւ ունի 10 տարվա արտոնյալ ժամանակաշրջան:

Հունվարին գնաճ է արձանագրվել

Հունվարին դեկտեմբերի նկատմամբ սպառողական գներն աճել են 2,9 տոկոսով: Այդ մասին երեկ ասաց ազգային վիճակագրական ծառայության գների վիճակագրության եւ միջազգային համադրումների բաժնի պետ **Գուրգեն Մարտիրոսյանը**: Ըստ նրա ներկայացրած տեղեկատվության՝ պարենային ապրանքների գներն աճել են 4,9 տոկոսով, ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0,2 տոկոսով, իսկ ծառայությունների սակագներն աճել են 0,8 տոկոսով:

Ըստ ապրանքատեսակների. հունվարին՝ դեկտեմբերի համեմատ, 470 սպառողական ապրանքներից 252-ի գնով արձանագրվել է գնաճ, 129-ի գնով՝ նվազում, իսկ 19-ի գները մնացել են անփոփոխ:

Ռիելթորները բողոքի ցույց էին կազմակերպել ֆինանսների նախարարության առջեւ

Անշարժ գույքի գործակալությունների տնօրենները ու աշխատակիցները երեկ ֆինանսների նախարարության առջեւ բողոքի ցույց էին կազմակերպել՝ պահանջելով վերանայել «Արտոնագրային վճարների մասին» օրենքի փոփոխությունները, համաձայն որոնց, ընկերությունները ամսական յուրաքանչյուր աշխատակցի համար պետք է 60 հազար դրամ հարկ վճարեն:

Ռիելթորների ներկայացուցիչների հետ հանդիպել է ֆինանսների փոխնախարար **Սուրեն Կարայանը**: Նա խոսացել է անշարժ գույքի գործակալությունների կողմից հիմնավոր առաջարկների դեպքում քննարկել դրանք եւ չի բացառել արված փոփոխությունները վերանայելու հնարավորությունը: Այդ մասին ասացին հանդիպման մասնակից ռիելթորները:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԼԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահություն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենյակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայություն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Դեկտեմբերին անշարժ գույքի գները էապես չեն փոխվել

Սակայն գործարքների քանակն աճել է

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2012-ի դեկտեմբերին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 18170 գործարք, ինչը 15,6 տոկոսով բարձր է նոյեմբերի եւ 18,9 տոկոսով ցածր՝ 2011-ի դեկտեմբերի գործարքների համեմաս: Միայն օտարման գործարքների քանակը դեկտեմբերին նոյեմբերի համեմաս աճել է 10,7 տոկոսով, իսկ անցյալ տարվա դեկտեմբերի համեմաս՝ 1,2 տոկոսով: 4767 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 78,7 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Օտարված անշարժ գույքի 32,9 տոկոսը բնակարաններն են, իսկ օտարման գործարքների քանակի 38,1 տոկոսն արձանագրվել է Երեւանում:

Մայրաքաղաքում առուվաճառքի գործարքների 54,1 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2012-ի նոյեմբերի համեմաս, դեկտեմբերին բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 18,9 տոկոսով, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմաս՝ նվազել է 0,8 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա դեկտեմբերին նոյեմբերի համեմաս աճել են՝ 0,4 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	դեկտեմբեր 2011 թ.	դեկտեմբեր 2012 թ.	նոյեմբեր 2012 թ.
Կենտրոն	426395	421000	420300
Արաբկիր	339976	349500	348000
Քանաքեռ-Զեյթուն	264883	278000	277000
Նոր-Նորք	229554	242850	241050
Ավան	239224	250000	249000
Էրեբունի	233915	242600	242000
Շենգավիթ	231482	248200	247000
Դավթաշեն	256476	268500	267500
Աջափնյակ	227193	239000	237500
Մալաթիա-Սեբաստիա	224419	234100	233100
Նուբարաշեն	147187	145000	143500
Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից)	256400	265300	264200

Մարզերում, բացառությամբ Երեւանի, 2012-ի դեկտեմբերին վաճառվել են 396 բնակարաններ, որոնց քանակը նոյեմբերի համեմաս նվազել է 9,4 տոկոսով, իսկ 2011-ի դեկտեմբերի համեմաս՝ 1,7 տոկոսով: Միաժամանակ, բնակարանների միջին գները դեկտեմբերին նոյեմբերի համեմաս մարզերում աճել են 0,5 տոկոսով:

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները դեկտեմբերին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է 292 հազար դրամ: Աբովյանում եւ Վաղարշապատում (Էջմիածնում) 1 քմ գինը 153 հազար հազար դրամ է կազմել: Ապա գալիս են Նոր Հաճընը՝ 128 հազար դրամ, Արմավիրը՝ 119 հազար դրամ, Եղեգնաձորը՝ 118 հազար դրամ, Իջեւանը եւ Գորիսը՝ 116 հազար դրամ, Աշտարակը՝ 114 հազար դրամ, Մասիսը՝ 112 հազար դրամ 1 քմ-ի դիմաց ցուցանիշներով:

2012-ի դեկտեմբերին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 550 գործարք, որից 160-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2012-ի դեկտեմբերին նոյեմբերի համեմաս 35,6 տոկոսով, իսկ մարզերում՝ 10,5 տոկոսով: 2011-ի դեկտեմբերի համեմաս, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 27 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 5,1 տոկոսով: Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2012-ի դեկտեմբերին նոյեմբերի համեմաս աճել են 0,4 տոկոսով: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գներն այսպիսին են եղել.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	դեկտեմբեր 2011 թ.	դեկտեմբեր 2012 թ.	նոյեմբեր 2012 թ.
Կենտրոն	460000	470700	469100
Արաբկիր	370300	377400	376200
Քանաքեռ Զեյթուն	275200	290000	288100
Նորք-Մարաշ	302200	313700	313100
Ավան	249700	266800	265700
Էրեբունի	220000	234400	233200
Շենգավիթ	239700	250600	250050
Դավթաշեն	258300	271100	269100
Աջափնյակ	237100	243800	243100
Մալաթիա-Սեբաստիա	220700	234300	233200
Նուբարաշեն	144800	147300	146200
Միջինը Երեւանում (բացի Նորք Նորքից)	270700	281800	280600

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները նոյեմբերին հոկտեմբերի համեմաս աճել են 0,3 տոկոսով: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո, ինչպես միշտ, Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 305 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է, որտեղ 1 քմ-ն կազմել է 154 հազար դրամ, երրորդը Վաղարշապատը՝ 152 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 135 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 129 հազար դրամ, Գորիսը՝ 128 հազար դրամ, Ջերմուկը՝ 127 հազար դրամ, Իջեւանը՝ 122 հազար դրամ, Բյուրեղավանը՝ 120 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2012-ի դեկտեմբերին 2011-ի դեկտեմբերի համեմաս, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 1,2 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ նվազել է 36 տոկոսով: Ընդ որում Երեւանում նվազել է 78,3 տոկոսով, իսկ մարզերում՝ 29,7 տոկոսով:

2012-ի դեկտեմբերին նոյեմբերի համեմաս վարձակալության գործարքները նվազել են 10,7 տոկոսով, իսկ 2011-ի դեկտեմբերի համեմաս՝ 4 տոկոսով:

Դեկտեմբերին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 207 գործարքներ, որից 141-ը՝ Երեւանում: 2012-ի նոյեմբերի համեմաս, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 33,5 տոկոսով, ընդ որում, Երեւանում՝ 54,9 տոկոսով, իսկ մարզերում՝ 3,1 տոկոսով: 2011-ի դեկտեմբերի համեմաս, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 14,8 տոկոսով, ընդ որում, Երեւանում՝ 6 տոկոսով, իսկ մարզերում՝ նվազել 40 տոկոսով:

Այսպիսով, դեկտեմբերին անշարժ գույքի շուկայում գործարքների քանակը կրկին ավելացել է, իսկ նոյեմբերին դրանց քանակը նվազել էր: Ինչ վերաբերում է գներին, ապա դրանք շարունակում են մնալ առանց էական փոփոխությունների:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՇԱՓՈՐՅ

Պարույր Հայրիկյանը լավ է զգում

1-ին էջից

Երեկ կեսօրին, Գրիգոր Լուսավորիչ հիվանդանոցի փոխտնօրեն Գագիկ Մանուկյանը վիրահատությունից հետո Հայրիկյանի վիճակը գնահատեց բավարար: «Հեռացվել է գնդակը, որը գտնվում էր աջ անրակային հատվածի փափուկ հյուսվածքներում: Այժմ նա ինքնոս վիճակում է, մի քանի ժամից լրիվ կարթնանա, ցավեր չունի, արյան ճնշումը եւ գիտակցությունը նորմալ են: Կմնա վերակենդանացման բաժնում վերահսկողության տակ՝ 2-3 օր, հետո կտեղափոխվի ընդհանուր բաժանմունք», ասաց բժիշկը՝ ընդգծելով, որ ամբողջովին ապաքինման համար անհրաժեշտ է առնվազն 7-10 օր: Հայրիկյանի փաստաբան Լեւոն Բաղդասարյանի փոխանցմամբ՝ ընտրությունների հետաձգման հետ կապված հնարավոր քայլերը պարզ կդառնան երկուշաբթի. որոշումը պայմանավորված կլինի Հայրիկյանի առողջական վիճակով:

Երեկ՝ վիրահատությունից հետո Պարույր Հայրիկյանին է այցելել նախագահ Սերժ Սարգսյանը: «Ակնհայտ է, նրանք, ովքեր կանգնած են հանցագործության հետեւում, նպատակ են ունեցել ազդել ընտությունների բնականոն ընթացքի վրա: Այդ զզվելի հանցագործությունն ուղղված է ոչ միայն Հայրիկյան թեկնածուի, ոչ միայն պետական գործչի, այլ նաեւ մեր անվտանգության դեմ: Ուզում եմ, որ բոլորը վստահ լինեն՝ մեր իրավապահ մարմիններն ամեն ինչ անելու են, որ բացահայտեն հանցագործությունը: Բժիշկներն արդեն շատ բան են արել, որ Պարույր Հայրիկյանն ապաքինվի»:

Հիվանդանոց են այցելել նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը, առողջապահության նախարար Դերենիկ Դումանյանը, պատգամավորներ, նախագահի թեկնածուներ, քաղաքական գործիչներ: Գործող նախագահ, նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանը հայտարարել է, որ 3 օրով կասեցնում է քարոզարշավի ընթացքն ու քարոզչական հոլովակների տարածումն ու լուսաբանումը: Նախագահի մյուս թեկնածուներն էլ հայտարարել են, որ քարոզարշավ չեն կազմակերպի, մինչեւ հայտնի չդառնա՝ ընտրությունների ընթացքը կասեցվում է, թե՝ ոչ:

Հիշեցնենք, որ ուսիկանապետ Վլադիմիր Գասպարյանի ներկայացմամբ՝ հանցագործը երկու կրակոց է արձակել, որից մեկը դիպել է Հայրիկյանին եւ նվաստել աջ ուսը: Մահափորձի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ ՔՕ 34-305 հոդվածի հատկանիշներով՝ «Պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության հանցափորձ, որը կատարվել է նրա նկատմամբ գործունեությունը դադարեցնելու նպատակով» հատկանիշներով: Վերոնշյալ հանցագործության համար մեղավորները կպատժվեն 12-20 տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ: Նախաքննությունը վարում է Ազգային անվտանգության ծառայությունը: Ստեղծվել է ուսիկանության եւ ազգային անվտանգության ծառայության համատեղ օպերատիվ քննչական խումբ:

Հայրիկյանի հետ կատարվածը ամբողջ օրվա ընթացքում եղել է ոչ միայն տեղական մամուլի եւ համացանցի, այլեւ միջազգային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Բրիտանական BBC հեղինակավոր հեռուստաընկերությունը Հայրիկյանին ներկայացրել է որպես խելացի, ազնիվ եւ հայրենասեր անձնավորության, որը ազատության մարտիկ էր, երկար տարիներ անցկացրել է խորհրդային բանտում, աքսորվել է եւ հիմա հանդիսանում է Հայաստանի անկախության խորհրդանիշներից մեկը: The Washington Post-ը նախագահի 63-ամյա թեկնածուին բնութագրել է խորհրդային տարիների այլախոհ եւ ազատության համար պայքարող անձ, որը փեսրվարյան ընտրությունների ֆավորիտներից էր: Հայրիկյանը եղել է նաեւ ռուսական եւ թուրքական լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում:

Հ. Գ.- Երեկ ուշ երեկոյան Հայրիկյանը հայտարարեց, որ իր դեմ մահափորձը կազմակերպել են դրսի ուժերն ու պետք է որոնումները այդ ուղղությամբ կենտրոնացնել: Նախագահի թեկնածուն իրեն լավ է զգում, սակայն ստիպված է օգտվել ընտրությունները 15 օրով հետաձգելու սահմանադրական դրույթից:

Ինսուլինի առաջին խմբաքանակն արդեն Հայաստանում է

Առողջապահության նախարարությունից տեղեկացանք, որ 2013 թվականին պետության կարիքների համար ինսուլինի առաջին խմբաքանակն արդեն Հայաստանում է: Նախարար Դերենիկ Դումանյանի հրամանով հաստատվել է ինսուլինային սրվակների բաշխացուցակը եւ հանձնարարվել 1-2-օրյա ժամկետում ինսուլինային սրվակները բաշխել Երեւանի ու մարզերի բժշկական հաստատություններին: Ձեռք բերված ինսուլինի խմբաքանակն արդեն երեկվանից բաշխվում է:

Նախարարությունը, հայցելով շահառուների ներողամտությունը, տեղեկացնում է, որ վերջին շրջանում ինսուլինի բաշխման կարճաժամկետ ընդհատումը կապված էր ինսուլինի գնման գործընթացների հետ:

Ի. Պ.

Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի դիմումը Պարույր Հայրիկյանի հետ կապված միջադեպի վերաբերյալ

Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի դիմումը հրապարակելու առաջարկությամբ հանդես է եկել նրա նախագահ, քաղաքական գիտությունների դոկտոր Հայկ Քոթանջյանը:

Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիան իր պարտքն է համարում արձագանքել միջադեպին՝ կապված ՀՀ նախագահի թեկնածու, հայ ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ եւ իրավապաշտպան Պարույր Հայրիկյանի վրա 2013 թ. հունվարի 31-ին կատարված զինված հարձակման հետ:

Ասոցիացիան, տվյալ գործողության իրավական գնահատումը եւ պատճառների ու կատարողների պարզումը թողնելով իրավասու մարմիններին, նախագահական ընտրությունների նախաշեմին տեղի ունեցած այս միջադեպը գնահատում է որպես քաղաքական բախտախնդրություն եւ հանրապետության բոլոր ողջամիտ քաղաքական ուժերին կոչ է անում համախմբելու ջանքերը ներքաղաքական կայունության եւ օրինապաշտության, արդար եւ ժողովրդավարական նախագահական ընտրություններ ապահովելու համար:

Ասոցիացիան նաեւ մաղթում է պարոն Պ. Հայրիկյանին շուտափույթ ապաքինում եւ անհապաղ վերադարձ նախագահական ընտրարշավ:

ԱԶԳ

Վերջին խմբագրական

«Ազգի» հունվարի 26-ի համարում խոսացել էինք, որ Քյոլնի համալսարանում հյուրընկալած Հասան Ջեմալի արտասանած խոսքին կանդրադառնանք առանձին: Դրան հավելենք նրա՝ «1915. Հայոց ցեղասպանություն» գրքի մասին 2012-ի նոյեմբերին Գերմանիայում հրապարակված գնահատականները՝ բեսթսելլեր դարձած գրքից որոշ մեջբերումների համադրությամբ: Ստորև երեք ձայն՝ գերմանացու, թուրքի, հայի:

«Մեռյալներ ու տաբու. Ստի ուժի դեմ»

Թուրք լրագրող Հասան Ջեմալի գրքի մասին «Դեր Թագեսշպիգելում» այսպիսի կարծիք էր գրել Թոմաս Զայլբերցը՝ այն համարձակ» որակելով: Ջեմալը երկար, ցավագին ճանապարհի վերջնագծին է հասել, գրում է թերթը՝ հիշատակելով, թե Թուրքիայի պաշտոնական ուղին շատ երկար դավանած լրագրողը վերագնահատել է Թուրքիայի անցյալը: «Միլլիեթ» թերթի 69-ամյա սյունակագիրը Ջեմալ փաշայի թոռն է, ինչը կրկնակի ավելացնում է նրա գրքի հանդեպ հանրային հետաքրքրությունը: Մեծացել է մի ընտանիքում, որտեղ պարի դերը կոտորածի, ցեղասպանության մեջ այնպես է ներկայացվել, ինչպես մինչ օրս Թուրքիան է պնդում: Առաջին համաշխարհայինի ժամանակ հայերը ռուսներին միացան ու պայքարեցին Օսմանյան կայսրության դեմ, այդ պատճառով էլ տեղահանվեցին, պատերազմական պայմանները նպաստեցին, որ զոհեր լինեն: Մուսաֆա Քեմալին էլ, որ մինչեւ այսօր ժամանակակից Թուրքիայի հարգարժան հայրն է, նման ընկալում է վերագրվում: 1920-ի աորիլին հետօսմանական շրջանի առաջին խորհրդարանում Աթաթուրքն իր ճառերից մեկում հայերի հանդեպ զանգվածային կոտորածը «ամոթալի արարք» է որակում: Այս նախադասությունը հետագայում խորհրդարանական արձանագրություններից ջնջվել է: «Նույնիսկ Աթաթուրքին են գրաքննում», գրում է Ջեմալը: Սուտը զորավոր էր: Թեպետ ծանոթ էր, կարդում էր պաշտոնականից տարբեր տեսակետներ, բայց ինչպես ինքն է խոստովանում իր գրքում, այդ տեսակետներին հայտնի սյունակագիրն իր ամենօրյա գրություններում չէր անդրադառնում: Միգուցե «գլխում դեռեւս 1915-ի տաբուն» էր: Աստիճանաբար նա իրեն հեռացնում է պատմության ստից, հասկանում, որ ոչ միայն Հայոց ցեղասպանության մասին պատմություններն են խեղաթյուրված ներկայացվել կամ լռության մատնվել, այլեւ քրդերի, հույների, ալեւիների ու հրեաների հանդեպ իրականացված ջարդերն են թաքցրել հանրությունից: «Թուրքիան վախ ունի, գրում է Ջեմալը: Մեր պետության մեջ պատմության վախն է կառավարողը»: Անցյալի մութ էջերի մասին փաստաթղթերն արխիվներից չքվել են, դասագրքերն էլ «մաքուր» ազգ են ներկայացնում թուրքերին: Ով ընդդիմախոսում է, հռչակվում է հայրենիքի դավաճան, ինչպես պատմաբան Թաներ Աքչամը, կանգնում է դատարանի առջեւ, ինչպես գրականության Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուկը, կամ սպանվում, ինչպես Դինքը:

Ջեմալը վստահ է, որ սուտն ու կեղծիքն են խոչընդոտում թուրք հասարակության ազատագրմանը, ժողովրդավարացման ընթացքից հետ պահում: Պետության գաղափարախոսները գիտեին, որ «ճշմարտությունը փրկում է մարդկանց», եւ այդ պատճառով ուզում էին տաբուներն ամուր պահել: Կառավարող քաղաքական գործիչներն այսօր էլ դեռ փառաբանում են 1920-ականներին Փոքր Ասիայից հույների արտաքսումը, իսկ կրթական համակարգն առաջվա նման սնվում է կույր ազգայնամոլությամբ եւ ռասիզմով: «Իրավիճակն երեւի այնքան էլ մռայլ չէ, որքան Ջեմալն է նկարագրում», գրում է գերմանացի Թոմաս Զայբերթը «Դեր Թագեսշպիգելում»: Մի քանի տարի առաջ հաշվի առնելով, որ Ջեմալի «1915. Հայոց ցեղասպանություն» գիրքը կգրգռեր զինված ազգայնականներին, գրախանութը ռիսկի չէր էլ դիմի, իսկ Ջեմալի դեմ գործ կհարուցվեր՝ թուրք ցեղը վիրավորելու համար: Բայց համացանցում հայտնված մի քանի կատաղի մեկնաբանություններից բացի ուրիշ ոչինչ չի գրվել», նկատում է գերմանական լրատուն:

Գերմանական «Դոյչլանդռադիոն» էլ անդրադառնում է Թուրքիայում Հայոց ցեղասպանության՝ երկար ժամանակ տաբու լինելու փաստին: Այդ տաբուով է մեծացել նաեւ լրագրող Հասան Ջեմալը: Գրքում զետեղված է այն լուսանկարը, որում Ջեմալը սպիտակ մեխակ է դնում Ծիծեռնակաբերդի զոհերի հուշարձանին, երբ նախագահ Գյուլի պատվիրակության կազմում Երեւան էր ժամանել: Ջեմալը հիշում է՝ երկար ժամանակ պահանջվեց որոշելու՝ այցելե՞մ, թե՞ չայցելեմ հուշարձան: «Զգում եմ, որ դրանով իմ ներսում էլ տաբուի մի պատ եմ քանդելու: Բայց հիշում եմ Հրանտ Դինքի խոսքերը, որ մեզ՝ թուրքերիս էր ուղղում՝ եկեք հավատվենք ու վերջապես ապացուցենք, որ փոխադարձաբար հարգում ենք մեր ցավը»: Դինքի սպանությունը Ջեմալի համար դարձավ շրջադարձային՝ իր երկրի պատմության մութ, ցավագին էջերը բացելու: Ավելի վաղ հարցեր իհարկե ծագում էին՝ ինչո՞ւ իր մտերիմ ընկերներից մեկը՝ ԱՄՆ-ում պաշտոնավարող թուրք դիվանագետը սպանվեց 70-ականներին ԱՍԱԼԱ-ի ձեռքով: Իրենց ընտանիքում ինչո՞ւ էին այդքան սակավախոս, երբ խոսքը մեծ հոր, մանավանդ նրա մահվան հանգամանքներին էր վերաբերում: Երեւանում Հասան Ջեմալը հանդիպում է իր պապին սպանած վրիժառուի թոռանը ու գրքում հետեւյալն արձանագրում. «Սկզբում մի փոքր նյարդային էի: Արմեն Գեւորգյանը 2 լուսանկար էր բերել, դեղնած, եզրերը պատռված ու տխրությամբ լի: Մի լուսանկարում պապի տունն էր, որտեղ մինչեւ1915 թվականն ապրել էին: Մյուսը մորուքավոր մի թուրքի էր պատկերում, որ բռնարարքներից ու տեղահանությունից փրկել էր Գեւորգյանի պապի ազգական երկու երեխաներին, 2 տարի պահելուց հետո անվնաս վերադարձրել ընտանիքին: Դեմ հանդիման նստած էինք, թեյ ու սուրճ էինք խմում, խոսում խաղաղության անհրաժեշտության մասին: Հեռախոսահամարներ փոխանակեցինք: Հաջորդ անգամ նա ինձ կզանգահարի, երբ Ստամբուլ գա, իսկ ես նրան Բոսֆորի ափին ձուկ ու ռաքի կպատվեմ»:

1944-ին լույս աշխարհ եկած Հասան Ջեմալն իր հասակակից շատերի նման դպրոցում սովորել է ժամանակակից Թուրքիայի նվաճումների մասին, իսկ Օսմանյան կայսրության անկումը թեմա չէր դառնում, ինչպես նաեւ այն, որ արդի Թուրքիայի տարածքներում ոչ միայն թուրքեր, այլեւ քրդեր, հույներ, կովկասցիներ, հայեր են ապրել ու ապրում են: Ջեմալն այս տաբուները «պատմության հանդեպ վախ» է անվանում: «Նա, ով հանդիպումն անցյալի հետ ոչ թե ատելությամբ, այլ կարեկցանքով է պարուրում, ոչ միայն պատմությունը կազատի շղթաներից, այլեւ ինքն իրեն կազատագրի»: «Անցած տարիներին Ջեմալն արտասահմանում հայկական սփյուռքի հետ շատ է հանդիպել: Զալցբուրգում թե Լոս Անջելեսում համբերատար ունկնդրել է զոհերի հետնորդների ցնցող վկայությունները, որոշներն ընդգրկել գրքում: Անկեղծ գիրք է», գնահատում է գերմանական ռադիոն, հատկապես այն մասը, որ վերաբերում է Ջեմալի ընտանեկան պատմությանը: Իսկ քննադատում է հեղինակի՝ հաճախ առաջին դեմքով պատմելու եւ իր հոդվածներից մեջբերումներ անելով գիրքը սնելու գրելաձեւը: Առաջիկայում գիրքը թարգմանվելու է արեւելահայերեն, արեւմտահայերեն, նաեւ՝ ռուսերեն:

Հասան Ջեմալը առաջնորդարանում

Intellectual Journey՝ ուրացումից մինչեւ ճանաչում

2 գիրք գրեցի՝ քրդական հարցի, իմ ռադիկալ տարիների մասին: Ծայրահեղ ձախ հայացքներ ունեի, պատմում է Ջեմալը: Երբ պատմությունը բեռ է, հասարակական, պետական վերահսկողության պայմաններում մարդն ուրանում է ազգությունը, իմ երկու՝ հանրությանը քաջ հայտնի լրագրող ընկերները թաքցրել էին, որ մեկի մայրը հայ է, մյուսինը՝ լավը մենք ենք, մեր ազգը... Այնքան մեծ վախ ունենք պատմությունից, պատմական ճշմարտությունից: Ինչ աբսուրդ է պատմության ուրացումը: Թուրքիայում պատմության մասին խոսելը քաղաքական պայքար է: Ցավը, արմատները, լեզուն, ինքնությունը ջնջելը ոճրագործություն է: Մարդկության դեմ ոճիր է ուրացումը:

2011-ին Լոս Անջելեսում հայ համայնքի հետ հանդիպումից առաջ հյուրանոցում ելույթս էի գրում: Ո՞ր բառն ընտրեմ՝ ջա՞րդ, թե՞ ցեղասպանություն: Գրեցի, ջնջեցի: Ինչո՞ւ: Ինչո՞ւ է լեզուս դժվար արտաբերում: Ճիշտ նույն կերպ՝ Ծիծեռնակաբերդ բարձրանամ, թե՞ չբարձրանամ: Դեռ կա՞ն տաբուներ, որ հաղթահարել չեմ կարող: Ազատ չե՞մ, ամոթ չէ՞, Հասան Ջեմալ: Այդ պատճառով էլ հայերի առջեւ խոսքս այսպես սկսեցի. «Ճանաչում ու հասկանում եմ ձեր ցավը, այստեղ եմ, որ ցեղասպանության ցավը ձեզ հետ կիսեմ»: Այս գրքում ցեղասպանություն բառը բանավեճի առարկա չեմ դարձնում, ցանկությունս է՝ Թուրքիայում տաբուից զրկել ցեղասպանություն բառը, մենք պիտի մե՛ր պատմության մասին բանավիճենք, ես անվանում եմ ցեղասպանություն, մյուսները՝ տարբեր անուն են տալիս: Հայերն էլ տարբեր բառեզրով են արտահայտում ցեղասպանությունը՝ ջարդ, կոտորած, եղեռն, աղետ: Միեւնույն է, թե ինչ են ասում, կարեւորն այն է, որ Թուրքիայում ցեղասպանություն բառը հետապնդման պատճառ չդառնա, արգելք չդառնա, թուրքական ազատ հասարակության մեջ բառը գործածվի, մարդն ազատ լինի կարծիք արտահայտելիս: Գերմանիան լավագույն օրինակն է մեդալի երկու կողմերն ուսումնասիրելու՝ նացիստական պատանդ առնված միտքը եւ ազատ մտքի հաղթանակը: Նույնը կարելի է անել Թուրքիայի պարագային: 1968-ին այս երկրի հանրությունը շատ խորքային վերանայում էր անցյալը: Վիլլի Բրանդի՝ վարշավյան գետնոտում ծնկի իջնելն ազդանշան էր հանրության համար: Դինքն իր կյանքով վճարեց, նրա դին ուղեկցեցին շատերը, ներողության ստորագրահավաք եղավ, համալսարաններում շատերը սկսեցին խոսել, այլընտրանքային կարծիք ձեւավորվեց:

Գրողի աստառն ու վերարկուն

Հայրս զավակներից ավագն էր: Մեր ընտանիքն ապահաղահական էր, քաղաքականության մասին չէին խոսում կամ էլ եթե խոսում էին, ապա՝ պաշտոնական տեսակետը: Երիտասարդ տարիներին ֆեմալիստ էի: Իսկական պատմությանը դեմ հանդիման կանգնեցի ԱՍԱԼԱ-ի գործողություններից հետո: «Զումհուրիեթի» լրագրող էի, հարցնում էի՝ ի՞նչ են ուզում մեզանից, մեր դիվանագետներից: Սկսեցի կռահել, որ ցավագին մի բան կա թաքնված տեռորի հետեւում: 1981-ին «Զումհուրիեթի» իմ կոլեգաներից մեկը Օռլի օդանավակայանում այրվել էր: Իմ հոդվածում պետական տեսակետն էի պաշտպանել: Իմ սերնդակից շատերը շարունակում են մնալ իրենց հին դիրքորոշումը, ես՝ Intellectual Journey-ի (թրգմ.՝ մտավոր ուղեւորություն) արդյունքում սխալս հասկացա, երբ կարդացի այլընտրանքային պատմությունը ներկայացնողներին՝ Աչքամին, Բերքթային, «Բելգե», «Արաս» հրատարակչությունների գրքերը, Հրանտ Դինքի թերթը:

«Ամոթ չէ՞, Հասան Ջեմալ»

«Թուրքիայում մնացած 20.000 հայերի համար մխիթարություն է Հասան Ջեմալի նման ազդեցիկ լիբերալ թուրքի գոյությունը: 2015-ին աշխարհի հայերը հիշատակելու են «Մեծ աղետի» 100-ամյակը: Մինչ այդ Թուրքիան կհասցնի՞ խաղաղություն կնքել սեփական անցյալի ու Հայաստանի հետ: Հասան Ջեմալի նման անվախ մարդիկ կարող են օգտակար լինել այդ հարցում», վերոհիշյալ հաղորդումն այսպես էր ամփոփել «Դոյչլանդռադիոն»: Ինչ կա որ՝ գերմանական հայացք է: Շատ կուզենայի հավատալ այս տողերին, բայց առաջին հերթին Հասան Ջեմալի՝ լրագրողի, գրողի ապրումի անկեղծությանը... Քյոլնի համալսարանում կարմիր փողկապով էր, Առաջնորդարանի կայքէջում տեղադրված լուսանկարում, որ փաստ է դարձել հունվարի 20-ին, դարձյալ նույն գույնով: Գրողի աստառն ու վերնազգեստը այսքա՞ն տարբեր գույներ ունեն: Իր նախնիներին հավատարիմ կարմիրը նախընտրող քաղաքագիտություն ուսանած Թուրքիայի քաղաքացի՞ն է, թե՞ իր ազգը քավարանին մոտեցնող մտավորականը: Ենթավերնագրում՝ իր բառերն են:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Քյոլն, Գերմանիա

Բուլղարներն էլ են ընկրկում թուրքերի առջեւ

Հեռուստալիքների համար բաղձալի սենսացիոն իրադարձություն դարձավ այն միջադեպը, երբ երիտասարդ մեկը ատրճանակը դեմ էր տվել ամբիոնի մոտ ելույթ ունեցողի քունքին: Հետո հաջորդեց զինված անձի վնասազերծման արկածային տեսարանը: Տեսաժապավենը տարածվեց աշխարհով մեկ, թեեւ մեկնաբանություններն ավելի շուտ տեխնիկական բնույթ էին կրում: Սակայն ռուսասանյան ՁԼՄ-ները բավականին շահագրգռորեն բացահայտեցին տեղի ունեցածի ենթատեքստերը:

Հայաստանում էլ առանձնապես չխորացան դեպքի մանրամասների մեջ: Երեւի այն հանգամանքի բերումով, որ հայաստանյաց ժողովուրդը կլանված է նախագահական նախընտրական պայքարի մրցակցային դաշտի եզակի անպտղության պատճառների բացահայտումներով:

Ինչեւէ: Միջադեպը տեղի ունեցավ Բուլղարիայում, իսկ գործող հերոսները տեղացի թուրքեր էին: Թե ինչ է թուրքը բուլղարների համար, հայերիս պետք չէ բացատրել: Եղան նաեւ ժամանակներ, երբ Օսմանյան կայսրության անկումից հետո բուլղարները վրեժխնդիր էին լինում երկրի հյուսիս-արեւելքում բուն դրած թուրքերի նկատմամբ, վարելով ընդգծված մերժողական քաղաքականություն: Իսկ Տոդոր Ժիվկովի կոմունիստական վարչակարգը նույնիսկ փորձեց թուրքերին կամ ենթարկել ուծացման, կամ էլ պարզապես վտարել Բուլղարիայից: Համենայն դեպս 300 հազար թուրքեր լքեցին երկիրը:

Բայց ահա եկան եվրոպական «հանդուրժողական» դեմոկրատիայի լուսավոր ժամանակները, եւ բուլղարացի թուրքերը երջանիկ հնարավորություն ստացան լայնորեն պայքարելու ազգային փոքրամասնության իրենց իրավունքների համար: Առավել եւս, որ այսօր նրանք կազմում են Բուլղարիայի 7 միլիոն բնակչության 10 տոկոսը: 1990 թվականին նրանք հիմնադրեցին «Շարժում հանուն իրավունքների եւ ազատությունների» կուսակցությունը, որը հետզհետե դառնալով ազդեցիկ քաղաքական ուժ, իր մշտական տեղն է գրավել երկրի խորհրդարանում, կառավարության կազմում:

Այս համեստ պատմական էքսկուրսից հետո կրկին վերադառնանք հիշյալ ձախողված մահափորձին՝ ով էր ում ուզում սպանել եւ ինչու: Ելույթ ունեցողը թուրք էթնոսին անհարիր ամպագոռգոռ անունով հիշյալ կուսակցության լիդեր Ահմեդ Դոգանն էր, նրա վրա հարձակվողը՝ նույն կուսակցության երիտասարդական թեւի ներկայացուցիչ 25-ամյա Օքթայ Ենիմեհմեդովը:

Բանն այն է, որ իրենց հավակնություններում բուլղարացի թուրքերը հեռուն են նայում: Սկսելով էֆից՝ հավասարի, լեզվի, լրատվամիջոցի, զանազան իրավունքների ազատության իրավունքներից, նրանք մոռեխի պես բազմանալով եւ աստիճանաբար ուժեղացնելով իրենց ներկայությունը Բուլղարիայի քաղաքական-տնտեսական-հասարակական կյանքում, բուլղարների համար մի տխուր օր կպահանջեն ինքնավարություն, այնուհետեւ կհառնի Կոսովոյի եւ, ով գիտե, Կիպրոսի հյուսիսի ուրվականը: Եվ պարզվում է, որ այս ճանապարհին կուսակցության լիդեր Դոգանը չի արդարացնում թուրքերի սպասելիքները, հակասական է, բավարար ակտիվություն չի դրսեւորում բուլղարական հողում թուրք փոքրամասնության ինքնարտահայտման ու ինքնահաստատման նկրտումներում: Այս հանգամանքը դուր չի եկել նաեւ թուրք երիտասարդին, որն էլ փորձել է ասպարեզից բռնի հեռացնել Դոգանին: Ավելին, Օքթայը համակրում է վերջինիս նախկին տեղակալ Կասիմ Դալին, որը գաղափարական նկատառումներով հակասության մեջ մտնելով Դոգանի հետ, դուրս է եկել նրա կազմակերպության կազմից եւ հիմնադրել առավել նացիոնալիստական «Ազատություն եւ արժանապատվություն» ժողովրդական կուսակցությունը, իրեն համարելով Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանի եւ պանթուրքիզմի վերածնման նրա գաղափարների հետեւորդը: Բացատրելի է, երբ այդ կուսակցության ստեղծումը շնորհավորել էր հենց Էրդողանը (ինչպես տեսնում եք, թուրքական «սփյուռքը» ոչինչ չի անում առանց Անկարայի): Բայց անհասկանալի է, թե ինչու էր Բուլղարիայի նախագահ Ռոսեն Պլեւնելիեւը իր ողջույնի խոսքում իրադարձությունը համարել «արժանի ավանդ» երկրի դեմոկրատական զարգացման գործում:

Մահափորձը չհաջողվեց եւ չէր էլ կարող հաջողվել, քանզի թուրք ակտիվիստի ատրճանակը ընդամենը գազային էր, իսկ երբեք փամփուշտները՝ սոսկ աղմկահար: Այդուհանդերձ փիարգործողությունը բերեց իր արդյունքը՝ Դոգանը հրաժարական տվեց: Սա էլ հիմք տվեց բուլղարական ընդդիմությանը հայտարարելու, որ ոչ մի «ոտնձգություն» էլ տեղի չի ունեցել երկրի դեմոկրատական զարգացման վրա: Տեղի է ունեցել սոսկ ներբուլղարական թուրք նացիոնալիստական շարժման ներքին հակասությունների բախում, ինչը պարզապես էլ ավելի կհամախմբի էթնիկ թուրքերին, նոր թափ կհաղորդի թուրքի բացառիկության գաղափարների ուժեղացմանը:

Ինչն է զարմանալին այս պատմության մեջ: Բուլղարացիները միշտ էլ աչքի են ընկել իրենց հակաթուրքական տրամադրություններով, ընդհանրապես: Նրանք նույնիսկ իրենց ազգանուններից տեխնիկապես բացառեցին մուսուլմանական-թուրքական արմատները: Բայց բավական է, որ նրանք մտնեն եվրոպական «ընտանիք» եւ համակվելով անձարակության հասցված «քաղաքական նրբանկատությամբ» ու նմանատիպ այլ հանդուրժողական իմաստություններով, իրենց երկրում դառնան անօգնական՝ թուրքական ագրեսիվության նկատմամբ:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Ամերիկյան լրատվամիջոցները չին ցանցահենների թիրախ են դարձել

Ամերիկյան «Ուոլ Սթրիթ ջոռնալ» թերթը հինգշաբթի օրը հայտարարեց, որ իր համակարգիչները չին ցանցահենների թիրախ են դարձել, եւ դատապարտեց լրագրողներին լրտեսելու Պեկինի փորձերը:

Նախօրեին համանման մեղադրանքով հանդես էր եկել հեղինակավոր «Նյու Յորք թայմս» թերթը, պնդելով, որ վերջին 4 ամիսներին չին ցանցահենները փորձել են թափանցել խմբագրության համակարգիչների մեջ՝ ի պատասխան անցյալ տարվա հոկտեմբերի 25-ին թերթում լույս տեսած այն ռեպորտաժի, որը վերաբերում է առեւտրային գործերում ՉԺՀ վարչապետ Վեն Ցզյաբաոյի մերձավորների կուտակված հարստություններին:

«Ուոլ Սթրիթ ջոռնալ» թերթը իր հերթին ընդգծում է, որ ցանցահենների գրոհների նպատակը եղել է իր լրագրողների կողմից Չինաստանի իրադարձությունների լուսաբանման վերահսկումը: Նշվում է, որ ՉԺՀ իշխանությունների կողմից ամերիկյան լրատվամիջոցների լրտեսումը արդեն դարձել է սովորական երեւույթ:

Մեդիամագնատ Ռուպերտ Մերդոկի News Corp ընկերության մեջ «Ուոլ Սթրիթ ջոռնալի» հետ հարեւանող Դոու Ջոնս գործակալության աշխատակից Փոլա Քիվը իր մեկնաբանության մեջ ընդգծում է, որ չին ցանցահենների գրոհները վկայում են, որ Չինաստանի նպատակը ոչ թե առեւտրային շահույթն է, այլ ՉԺՀ-ին վերաբերող նյութերի լուսաբանման վերահսկողությունը:

Փարիզի «Լիբերասիոն» թերթը հաղորդում է, որ «Ուոլ Սթրիթ ջոռնալի» ղեկավարությունը արդեն հինգշաբթի օրը վերանայել է սեփական տեղեկատվական ցանցը եւ ամրապնդել դրա անվտանգությունը:

Ցանցահենների գրոհներից զերծ չի մնացել նույնիսկ CNN հեռուստալիքը: Հինգշաբթի հեռմիջօրեին CNN-ը հայտարարեց, որ իր միջազգային ծառայության տեղեկատվական համակարգը մի քանի րոպե շրջափակված է եղել ի պատասխան այն լրատվության, որը վերաբերում էր «Նյու Յորք թայմսի» վրա ցանցահենների կատարած գրոհին: CNN-ի լրագրողների մեկն ասել է, որ «էկրանը 6 րոպե շարունակ սեւ է եղել»:

Պեկինի իշխանությունները մեղադրանքներին ի պատասխան ասում են, թե իրենք որեւէ կապ չունեն «Նյու Յորք թայմսի» վրա կատարված ցանցահենային գրոհների հետ: «Չինաստանի օրենսդրությունն արգելում է նման գրոհները, եւ մենք հուսով ենք, որ տվյալ հարցում բոլոր մասնակից կողմերը պատասխանատու դիրք կբռնեն», հայտարարել է ՉԺՀ արտգործնախարարության խոսնակ **Հոնգ Լեյը**:

Պ. Ք.

ԴԱՄԱՍԿՈՍ...

Սիրիացի ապստամբները գնդակոծել են իրանական օդանավ

Դամասկոսի միջազգային օդանավակայանի շրջակայքում մի շարք բնակավայրեր վերահսկող սիրիացի ապստամբները հրազենից գնդակոծել են իրանական առեւտրային մի օդանավ: Ձինված ընդդիմությունը Youtube ծառայությունում տեղադրել է հունվարի 31-ի մի տեսահոլովակ, որտեղ երեւում է, թե ինչպես ապստամբները սաստիկ գնդակոծում են Դամասկոսի օդանավակայանում վայրէջքի պատրաստվող «Բոինգ-747» օդանավը: Իրանում նման օդանավեր ունի միայն IranAir ավիաընկերությունը:

Դատելով տեսագրությունից՝ օդանավը լուրջ վնասվածքներ չի ստացել եւ շարունակել է վայրէջքը: Թե ովքեր էին դրա ուղեւորները եւ ինչ բեռ էր տեղափոխում՝ հայտնի չէ:

Վերջին շաբաթներին Դամասկոսի օդանավակայանը փաստորեն չի գործում: Քաղաքացիական պատերազմի պատճառով դեպի Սիրիա կատարվող չվերթերի մեծ մասը չեղյալ է հայտարարվել: Դամասկոսի օդանավակայանի ինտերնետային չվացուցակում նշված է, որ փետրվարի 1-ին ոչ մի օդանավ վայրէջք չի կատարի եւ այնտեղից չի թռչի:

Սիրիացի ապստամբներն ավելի վաղ հայտարարել էին, որ նախագահ Բաշար Ասադի վարչակարգին աջակցող երկրների քաղաքացիական օդանավերը իրենց համար օրինական թիրախներ են: Ընդդիմությունը նման երկրների թվին դասում է առաջին հերթին Ռուսաստանին եւ Իրանին:

Ապստամբները նաեւ հայտարարել են, թե լիբանանյան շիա արմատականների «Հզբոլլահ» շարժումը դեռ 2012-ին Սիրիայից ստացել է մոտ 2 տոննա մարտական թունավոր նյութեր: Այդ մասին հաղորդում է «Ջերուսալեմ փոստ» թերթը՝ վկայակոչելով սաուդյան աղբյուրներ:

Այդ տեղեկությունների համաձայն՝ վտանգավոր բեռները սիրիա-լիբանանյան սահմանով անցկացվել են մի քանի ամիս շարունակ՝ սկսած 2012-ի գարնանից: Մանանեխային (իպրիտ) գազից բացի, Լիբանան են տեղափոխվել նաեւ մարտավարական հրթիռների բաղադրիչներ, պնդում են ապստամբները: Նման հրթիռները կարող են մարտագլխիկներ տեղափոխել մինչեւ 300 կմ:

Անկախ աղբյուրներից առայժմ չհաստատված այս տեղեկությունները հրապարակվել են այն բանից հետո, երբ Իսրայելի օդուժը հարված հասցրեց Դամասկոսի արվարձանում գտնվող գիտական կենտրոնին (այլ լուրերի համաձայն՝ դեպի Լիբանան շարժվող ավտոշարասյանը):

Լատվիան եվրոգոտի կմտնի 2014-ի սկզբին

Ժողովրդի կեսից ավելին դեմ է

Լատվիայի խորհրդարանը վերջնական ընթերցմամբ հաստատել է երկրում միասնական եվրոպական արժույթ մտցնելու օրինագիծը: Մերձբալթյան այդ հանրապետությունը մտադիր է եվրոգոտի մտնել 2014 թվականի հունվարի 1-ին:

Խորհրդարանում քննարկումների ընթացքի վրա զգալի ազդեցություն է ունեցել վարչապետ Վալդիս Դոմբրովսկիսի ելույթը, որը հայտարարել է. «Եվրոյի մուտքը տրաբանական քայլ է մեր մակրոտնտեսական քաղաքականության վարման շրջանակներում: Արդեն հիմա մենք մեծ չափով գտնվում ենք եվրոգոտում»:

Քվեարկության ժամանակ 52 պատգամավոր արտահայտվել է օրինագծի օգտին, 40-ը՝ դրա դեմ, 2 պատգամավոր ձեռնպահ է մնացել: «Վեստի» գործակալությունը այս կապակցությամբ նշում է, որ եթե տվյալ դեպքում ձայնի իրավունք ունենային բոլոր լատվիացիները, ապա եվրոյի կողմնակիցների եւ հակառակորդների հարաբերակցությունը կարող էր միանգամայն ուրիշ լինել: Հանրային հարցումների արդյունքները վկայում են, որ Լատվիայում բնակչության կեսից ավելին (որոշ տվյալներով՝ 2/3-ը) դեմ է եվրոյին:

Լատվիացիները վախենում են, որ եվրոգոտուն միանալու դեպքում գները կկլորացվեն՝ վնասելով ընտանեկան բյուջեներին: Այդպես էր եղել թե՛ արեւմտաեվրոպական մի շարք երկրներում, եւ թե՛ հարեւան Էստոնիայում: Սակայն Լատվիայի բանկում պնդում են, թե գների աճը առասպել է: Ֆրանսիայի եւ Գերմանիայի իշխանությունները, օրինակ, 2011-ին եվրոգոտուն միացած Էստոնիայում թանկացումներ չեն նկատել: Ասում են, որ Էստոնացիների բախտը պարզապես չբերեց, քանի որ դա գների համաշխարհային բարձրացման տարի էր:

ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ՝ ՈՒԿՐԱԻՆԵՐԵՆ

Լեւոն Խեչոյանի «Խնկի ծառեր» ուկրաիներեն ժողովածուի առիթով

Լեւոն Խեչոյանը ժամանակակից հայ արձակի այն սակավ ներկայացուցիչներից է, որի գրականության ինքնահատուկ երանգն ու հնչեղությունը կյանքային երեւույթների, մարդկային հոգեբանության եւ հարաբերությունների խոր թափանցումների եւ գրողական սուր հայացքի շնորհիվ ստեղծում է լեզվամտածողական այնպիսի թանձր շերտավորումներ, որ աղահովում է ընթերցանության հիրավի ազդեցիկություն: Կերպարային բազմաշերտության, մարդու հոգեկան աշխարհի նուրբ, թափուն կողմերի բացահայտումների միջոցով ստեղծվում է խոսքի գունեղ պատկերայնություն, որով գրողը արձագանքում է իր ժողովրդի ու իր ժամանակի ամենացավոտ, ամենախոցելի խնդիրներին, այդ թանձրությունների մեջ, սակայն, պահպանելով կյանքի պոեզիան՝ լուսավոր գեղեցկությունը, բառի «գույնը», որովհետեւ այդպիսին է նրա լեզուն, նրա հայերենը՝ ծանր, բայց գունեղ:

Եվ պատահական չէ, որ նրա արձակը լայն արձագանքներ ունեցել է ոչ միայն այստեղ՝ Հայաստանում, նաեւ օտար, հատկապես ռուսալեզու եւ ուկրաինացի ընթերցողների շրջանակներում, տպագրված ինչպես մամուլում, նաեւ առանձին հրատարակություններով: Մոսկվայում հայ գրողների արձակի «Կանչ» ժողովածուում ընդգրկվել են նրա երեք պատմվածքները՝ «Զանգ», «Փոխանակում», «Ուսուցիչը»: Ռուս ընթերցողը նրա գրականությանը ծանոթ է «Գումանիտարիյ» հրատարակչության կողմից լույս ընծայած «Տոթ որ» ժողովածուով, որի թարգմանիչներից Գալինա Պետրովան ահա թե ինչ է գրում. «Ինձ թվաց, որ Լեւոն Խեչոյանի արձակի ընթերցումը պահանջում է առանձնահատուկ կենտրոնացում եւ պարտադիր եռանդուն ներին աշխատանք: Ուստի տարբեր մարդիկ այն կընթերցեն տարբեր ձեւերով: Մեր ներկայիս կյանքը լի է բնական եւ հրահրված ողբերգություններով, աղետներով եւ դժբախտություններով: Իսկ ուրիշի դժբախտությունը «հետ մղելու», ուրիշի ցավը չնկատելու ձգտման մեջ համառելով՝ անզգայանում եւ քայքայվում է: Գրողին մշտապես տանջում, բզկտում են այդ արնածոր, բնավ չանհետացող հարցերը»:

Այս հարցերը ոչ միայն գրականության մեջ, նաեւ դրանից դուրս են հետաքրքրում Լեւոն Խեչոյանին, որով ապրում է նա կյանքի յուրաքանչյուր օրը, ինչպես «ծանր լույս»՝ որպես խիղճ, պարտք ու պարտականություն՝ սեփական ինքնության, ժողովրդի, արյան ու հիշողության, ժամանակի ու գրականության առաջ:

2012-ին Լվովում ուկրաիներենով հրատարակվեց Լեւոն Խեչոյանի «Խնկի ծառեր» (վիպակ եւ պատմվածքներ) ժողովածուն՝ Անուշավան Մեսրոպյանի թարգմանությամբ: Ահա թե ինչպիսին է գրքի խմբագրի՝ բանաստեղծ Իրինա Ստարավոյտի տպավորությունը. «Այս արձակը «երեխաների համար» չէ, այս գիրը շանթահարում է. մարդկային պարադոքսի ողջ խորությունը խտացված է ժլատ նպատակաուղղված բառերի մեջ՝ ցույց տալու, թե ինչպես «անցնել երկրային դժոխքի ոլորաններով ու անեղծ մնալ»:

Խեչոյանի հերոսները կյանքի սահմանաբաժանին հայտնված մարդիկ են՝ հիշողության ճնշումից վիրավոր, նեսված պատմության մութ սվերների մեջ: Մարդիկ, որոնք ողբերգական 20-րդ դարի երջանիկ ու դժբախտ ճակատագրի որոգայթներում են՝ հասուն կյանքի եւ սիրո, հասուն կորուստյալ երազանքների: Այս գրքում փշուր առ փշուր վերակենդանացող հիշողություններով լի պատմություններ են»:

ՄԵԼԱՆՅԱ ՔԱԴԱԼՅԱՆ

«Candoco» պարային խումբն անցկացրեց վարպետաց դաս

Միացյալ Թագավորությունում ներառական պարարվեստի ոլորտի առաջատար «Candoco» պարային խմբի ներկայացուցիչները երեկ անցկացրեցին վարպետության դասընթաց, որին մասնակցում էին Երեւանի խուլերի սպորտի եւ մշակույթի պալատին կից ինքնագործ խմբի անդամները, Գյումրիի խուլ պարողները եւ «Միհր» թատերական խումբը:

«Candoco» պարային խմբի ներկայացուցիչներ Վելլի Օ'Բրայենը եւ Քրիս Օուենը հայ մասնակիցներին ծանոթացրեցին ընկերության փորձին, սովորեցրեցին ժամանակակից պարային տեխնիկաներ՝ հնարավորություն տալով մասնակիցներին բացահայտելու նոր գաղափարներ եւ բեմադրելու սեփական համարները:

«Եթե մարդն ունի հաշմանդամություն, ապա դա չի կարող ոչ մի կերպ արգելք հանդիսանալ պարելու համար: Մարդը եթե սիրով է պարում, ապա, անկախ նրա մարմնի ձեւից, միանշանակ ոչ մի խնդիր չի կարող առաջանալ»,- ասաց Վելլի Օ'Բրայենը:

Իսկ Քրիս Օուենն «Ազգի» հետ զրույցում ասաց, որ մեծ հաճույքով է գտնվում Հայաստանում. «Ուրախություն եմ ապրում՝ տեսնելով հայ երեխաների պատրաստակամությունը պարելու եւ ավելի շատ բան սովորելու: Ուրախալի է նաեւ, որ ֆիզիկական արատներ ունեցող մարդիկ փորձում են բացահայտել իրենց մարմնի հնարավորությունները»:

Երեւանի խուլերի սպորտի եւ մշակույթի պալատին կից արդեն հինգ տարի է գործում է ինքնագործ պարի խումբ: Հայկական ժողովրդական պարային համարներով նրանք հանդես են եկել բարեգործական համերգներով, բայց եւ փորձում են նոր պարեր բեմադրել այլ ժանրերում: Սիրողական այս խմբի անդամներն ակտիվ համերգային ծրագրերով հանդես չեն գալիս, սակայն ասում են, որ կանոնավոր պարապում են եւ փորձում նոր պարային համարներ բեմադրել:

Պարախմբի անդամներից Էլեն Խաչատրյանը իր տպավորությունների մասին ասաց, որ շատ ուրախ է մասնակցել այս դասընթացին. «Մինչեւ կյանքիս վերջ կհիշեմ այսօրվա դասընթացի ժամանակ սովորածս շարժումները: Իհարկե, դժվար է ընթանում գործընթացը, բայց շատ հետաքրքրական է»:

«Միհր» թատերախմբի գեղարվեստական ղեկավար Ցոլակ Մլկե-Գալստյանը «Ազգին» տեղեկացրեց, որ արդեն մտածում է համատեղ ծրագրերով հանդես գալ թե՛ անգլիացիների, թե՛ տեղի այն խմբերի հետ, որոնց սաները ունեն ինչ-ինչ ֆիզիկական խնդիրներ. «Համագործակցությունը կբացի նոր ուղղություններ «Միհր» թատերախմբի համար»:

The Guardian թերթը մի առիթով գրել է. «Candoco պարային խումբն ապացուցեց, որ վիրտուոզ պար ցուցադրելը որեւէ մեկի մենաշնորհը չէ: Նրանց բեմադրած պարը գրավչության եւ խիզախության միավորում է»:

«Candoco» ներառական պարային խմբի անդամ Վելլի Օ'Բրայենը տեղեկացրեց, որ «Candoco» ներառական պարային ընկերությունը հիմնադրվել է 1991թ-ին, 1998 թվականին, իսկ 2000-ին դարձել է ընկերության լիիրավ անդամը: Նա «Candoco»-ի հետ համագործակցությամբ հանդես է եկել միջազգային ճանաչում ունեցող բեմադրություններում եւ կարեւոր դեր է կատարել ընկերության լայնածավալ կրթական ծրագրերի տարածման գործում:

Իսկ Քրիս Օուենն ուսանել է ժամանակակից պարի Հյուսիսային դպրոցում, այնուհետեւ՝ Լոնդոնի ժամանակակից պարի դպրոցում: Ավարտելուց հետո նա աշխատել է բազմաթիվ պարային ընկերությունների հետ: Քրիս Օուենը «Candoco»-ի գործընկերներից է եւ վերապատրաստման դասընթացներ է անցկացնում տարբեր երկրներում:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Հակոբ Ալթունյանի 2 նոր գրքերի շնորհանդեսը Տորոնտոյում

Տորոնտոյի Ալեք Մանուկյան մշակութային կենտրոնում հունվարի 13-ին տեղի է ունեցել ՀԲԸՄ-ի երկարամյա անդամ Հակոբ Ալթունյանի երկու նոր գրքերի շնորհանդեսը՝ կազմակերպությամբ ՀԲԸՄ-ի Լիբանանի եւ Տորոնտոյի մասնաճյուղերի:

Գրքերից մեկը «Հայկական մշակույթի լուսավոր ճանապարհներով» խորագրի ներքո ներկայացնում է հայոց լեզվի զարգացման ընթացքը, իսկ մյուսը՝ «Նուբար Փաշա եւ Պողոս Նուբար Փաշա» վերնագրով, պատմության դասին է հանձնում լեգենդար երկու առաջնորդների կյանքի ուսանելի ճակատագրերը: Երկու գրքերն էլ այս տարի իր 90-ամյակը բոլորող ՀԲԸՄ-ի վեցերան անդամի համայնքային երկարամյա փորձառության արդյունքն են: Դրվատանքի խոսքերով հանդես են եկել ավագ քահանա **Զարեհ Զարգարյանը**, Տորոնտոյի Սբ Երրորդության հայկական եկեղեցու հոգեւոր հովիվը, ՀԲԸՄ Տորոնտոյի մասնաճյուղի գործադիր տնօրեն **Սալբի Տեր-Ղազարյանը** եւ առաջին գրքի խմբագիր **Սարգիս Համբոյանը**: Ընթերցվել է նաեւ ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը ողջույնի նամակը: Երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ Լաուրա Տարաքչյանն ու Կարին Եագուդյանը ընթերցել են հատվածներ գրքերից:

Շնորհանդեսի հովանավորներից է եղել նաեւ «Համազգայինի» Գլխաոր մասնաճյուղը: Հեղինակի խնդրանքով գրքերի վաճառքից ստացված հասույթը հատկացվելու է ՀԲԸՄ-ի Տորոնտոյի եւ «Համազգայինի» Գլխաոր մասնաճյուղերին:

Հ. Ծ.

Հայաստան-Ուկրաինա մշակութային համագործակցության ծրագիր

Երեկ մշակույթի նախարարությունում ստորագրվեց «Ուկրաինայի մշակույթի նախարարության եւ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության միջեւ 2013-2017 թթ. համագործակցության մասին» ծրագիրը:

Փաստաթուղթը ստորագրել են ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ ՀՀ-ում Ուկրաինայի դեսպան Իվան Կուխտան:

Ծրագրի համաձայն, կողմերը կաջակցեն ստեղծագործական կոլեկտիվների եւ անհատ կատարողների փոխանակումներին, մասնակցությանը երկու երկրներում անցկացվող միջազգային փառատոներին եւ մրցույթներին, կստեղծեն բարենպաստ պայմաններ կերպարվեստի, կինեմատոգրաֆիայի, գրադարանային եւ թանգարանային գործի, պատմամշակութային ժառանգության օբյեկտների, ժողովրդական արհեստների պահպանման բնագավառում համագործակցության զարգացման համար: Կողմերը կաջակցեն համատեղ նախագծերի. կինոյի, թատրոնի, գրականության ոլորտներում, ակտիվորեն կմասնակցեն երկու երկրների համար նշանակալից համարվող իրադարձություններին եւ միջոցառումներին: Փոխադարձության հիման վրա կկազմակերպվեն մշակույթի, կինոյի օրեր, կիրականացվեն ցուցահանդեսների փոխանակումներ:

Հայաստանի եւ Ուկրաինայի միջեւ մշակութային համագործակցության մեկնարկը տրվել է 1996 թվականին՝ «Երկու երկրների կառավարությունների միջեւ մշակութային համագործակցության մասին» ստորագրված միջկառավարական համաձայնագրով: Հետագայում այն հիմք է հանդիսացել երկու երկրների միջեւ մշակույթի ոլորտում համագործակցության զարգացմանը:

Ստորագրված փաստաթղթերի շրջանակներում իրականացվել են համատեղ միջոցառումներ, մշակույթի եւ արվեստի բնագավառի անհատ կատարողների եւ ստեղծագործական խմբերի փոխանակումներ, ճարտարապետական հուշարձանների վերականգնման աշխատանքներ, ինչպես նաեւ ապահովվել է հայաստանյան ներկայացուցիչների մասնակցությունը Ուկրաինայում կազմակերպվող մրցույթներին, փառատոներին եւ հակառակը:

Հայ-ուկրաինական մշակութային համագործակցությունն առավել ակտիվացել է 2010-2012 թվականներին, հատկապես 2011 թ. հունիսի 30-ից հուլիսի 5-ը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի Ուկրաինա կատարած պաշտոնական այցին զուգընթաց՝ հայ-ուկրաինական մշակութային համագործակցության շրջանակներում:

Վերջին տարիներին ակտիվացել է համագործակցությունը գրական-թարգմանական ոլորտում, այս համատեքստում Հայաստանում պետպատվերով տպագրվել է Միրոն Նեստերչուկի «Պոեզիա Արմենիի» գիրքը, որում ներառված են հայ ժողովրդական, միջնադարյան, դասական եւ ժամանակակից գրողների բանաստեղծությունների ուկրաիներեն թարգմանությունները: 2012 թ. ապրիլին Կիեւում Մաքսիմ Ռիլսկիի անվան գրական թանգարանում կայացել է ուկրաինական «Վսեսվիտ» ամսագրի հատուկ համարի շնորհանդեսը, որն ամբողջապես նվիրված է հայ գրականությանը, մշակույթին եւ պատմությանը:

Համագործակցության ծրագրի ստորագրմանը ներկա էին Ս. Փարաջանովի տուն-թանգարանի տնօրեն Զավեն Սարգսյանը, Ազգային թատերական միավորման նախագահ Արա Խզմալյանը, Հայաստանի «Ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Գեւորգ Գեւորգյանը:

Լեւոն Արոնյանը բարելավել է վարկանիշը

ՖԻԴԵ-ի վարկանիշային նոր աղյուսակում թեեւ Լեւոն Արոնյանը 7-ով ավելացրել է գործակիցը (2809), սակայն պահպանել է տեղը 3-րդ հորիզոնականում: Արոնյանի վարկանիշը միայն մեկով է զիջում 2-րդ տեղում ընթացող Վլադիմիր Կրամնիկից, որի վարկանիշն անփոփոխ է մնացել:

Իսկ ահա Վեյf Ան Ջեեի մրցաշարի հաղթող Մագնուս Կառլսենը շարունակում է ավելացնել իր ռեկորդային վարկանիշը՝ հասցնելով 2872-ի: Հունվարի համեմատ նրա վարկանիշն աճել է 11-ով: Սա նոր ռեկորդ է: Հիշեցնենք, որ մինչ այդ աշխարհում ամենաբարձր անհատական վարկանիշն ունեցել է աշխարհի 13-րդ չեմպիոն Գարի Կասպարովը: 2000-ի հուլիսից մինչեւ 2001-ի մարս ընկած ժամանակահատվածում նրա վարկանիշը եղել է 2849: Եվ ահա այս տարվա հունվարի 1-ին Մագնուս Կառլսենը գերազանցեց Կասպարովի ցուցանիշը՝ վարկանիշը հասցնելով 2861-ի: Իսկ 2800-ի սահմանագիծն առաջին անգամ Կառլսենը հասել է 2009-ի նոյեմբերին (2801):

Լավագույն տասնյակում 4-10-րդ տեղերը զբաղեցնում են Թեյմուր Ռաջաբովը (2793), Սերգեյ Կարյակինը (2786), Վիշվանաթան Անանդը (2780), Վեսելին Թոփալովը (2771), Հիկարու Նակամուրան (2767), Շահրիյար Մամեդյարովն (2766) ու Ալեխանդր Գրիշչուկը (2764):

Բացի Լեւոն Արոնյանից, 100 ուժեղագույնների թվում են եւս 5 հայ գրոսմայստերներ: Վլադիմիր Հակոբյանը թեեւ պահպանել է

վարկանիշը (2704), սակայն 41-րդ տեղից նահանջել է 45-րդ հորիզոնական: Իսկ ահա Սերգեյ Մովսիսյանն առաջադիմել է: Նա վարկանիշը (2695) ավելացրել է 7-ով ու 62-րդ տեղից բարձրացել է 54-րդ հորիզոնական: Գաբրիել Սարգսյանը պահպանել է թե՛ վարկանիշը (2666), թե՛ իր դիրքը (80-րդ տեղ): 100 ուժեղագույնների շարքում ընդգրկվել է Տիգրան Պետրոսյանը, որի վարկանիշը 2663 է: Ֆրանսահայ գրոսմայստեր Տիգրան Ղարամյանը պահպանել է իր 2661 վարկանիշը, սակայն մեկ տեղով նահանջել է՝ հանգրվանելով 84-րդ հորիզոնականում:

Կանանց վարկանիշային ցուցակի առաջատարը կրկին Հուդիթ Պոլգարն է (2696): Լավագույն տասնյակում են նաեւ Հոու Յիֆանը (2617), Համպի Կոներուն (2597), Աննա Մուզիչուկը (2582), Նանա Ջագնիձեն (2555), Ջժաո Հուեն (2554), Կատերինա Լահնոն (2547), Նադեժդա Կոսինցեւան (2531), Մարի Սեբագը (2530) եւ Պիա Կրամլինգը (2523):

Հայ շախմատիստուհիներից 100 լավագույնների ցանկում են Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը: Էլինան պահպանել է վարկանիշն (2466) ու դիրքը (29-րդ տեղ): Նույնը վերաբերում է նաեւ Լիլիթ Մկրտչյանին, որը 2458 վարկանիշով 34-րդ տեղում է:

Հայաստանը ՖԻԴԵ-ի անդամ երկրների ցանկում իր միջին վարկանիշով (2663) եզրափակում է լավագույն հնգյակը: Առջեւում են Ռուսաստանը (2746), Ուկրաինան (2702), Չինաստանը (2670) եւ Ֆրանսիան (2663): Լավագույն տասնյակում 6-10-րդ տեղերը զբաղեցնում են Հունգարիան (2661), ԱՄՆ-ը (2655), Ադրբեջանը (2651), Հնդկաստանը (2636) եւ Լեհաստանը (2635):

ՊՍԺ-ում վաստակած ողջ գումարը Բեքհեմը կծախսի բարեգործական նպատակներով

Համաշխարհային ֆուտբոլի ներկայիս «աստղերից» մեկը՝ 37-ամյա Դեւիդ Բեքհեմը 5-ամսյա պայմանագիր է կնքել ֆրանսիական ՊՍԺ-ի հետ: Հատկանշականն այն է, որ այդ ընթացքում թիմում վաստակած ողջ գումարը Բեքհեմը փոխանցելու է բարեգործական հիմնադրամին: ՊՍԺ-ում Բեքհեմի շաբաթական աշխատավարձը կկազմի շուրջ 170 հազար ֆունտ ստեռլինգ: Այնպես որ թիմում հանդես գալու ժամանակահատվածում ֆուտբոլիստը բարեգործությանը կտրամադրի 3,5 մլն ֆունտ ստեռլինգ: Ակումբը Փարիզի կենտրոնում շքեղ բնակարան է հատկացրել Բեքհեմին:

Դեւիդ Բեքհեմը դեռեւս անցյալ տարվա դեկտեմբերին հեռացավ ամերիկյան «Լոս Անջելես Գելեքսիից»՝ 2-րդ անգամ նվաճելով երկրի չեմպիոնի տիտղոսը: Նա 5 մրցաշրջան հանդես եկավ այդ թիմում: Բեքհեմը ֆուտբոլային կարիերան սկսել էր անգլիական «Մանչեսթր Յունայթեդում», որտեղ հանդես է եկել 1993-2003-ին: Հետո նա մինչեւ 2007-ի մրցաշրջանի ավարտը խաղաց Մադրիդի «Ռեալում», որտեղից էլ մեկնեց ԱՄՆ:

Ջմռանը Բեքհեմը մի շարք առաջարկներ ստացավ տարբեր թիմերից: Նրան հրավիրում էր «Միլանը», չինական «Շանհայ Շենհուան»: Իսկ Անգլիայի հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Էրիկսոնը Բեքհեմին հրավիրում էր հանդես գալու իր գլխավորած «Ալ Նասրում»: Անգլիայում եւս մեծ էր հետաքրքրությունը Բեքհեմի նկատմամբ: Նա նույնիսկ մի քանի օր մարզվեց Լոնդոնի «Արսենալում»:

Բեքհեմը Փարիզում կարող էր հայտնվել դեռեւս մեկ տարի առաջ: Այն ժամանակ ամեն ինչ պատրաստ էր տեղափոխության համար, սակայն ֆուտբոլիստի կինը դեմ էր Եվրոպա տեղափոխվելուն, ուստի գործարքը չկայացավ:

«Երբեք այդքան շատ առաջարկներ չեմ ունեցել, որքան այս ձմռանը: Փարիզն ընտրեցի այն պատճառով, քանի որ տեսնում եմ, թե ակումբն ինչպես է զարգանում, ինչպիսի բարձր նպատակներ է հետապնդում: Շատ ուրախ եմ նման ծրագրի իրագործման մասնակից դառնալ: Փարիզը շատ գեղեցիկ քաղաք է: Անգլիայից եւս հրավերներ ունեի, սակայն բացի «Մանչեսթր Յունայթեդից», անգլիական այլ ակումբ չեմ տեղափոխվի:

Վերջին տարիներին նոր պայմանագիր կնքելիս խոսակցություններ էին տարվում, թե դա իմ վերջին գործարքն է: Ինչպես տեսնում եք, ես դեռեւս խաղում եմ: Հույս ունեմ, որ ՊՍԺ-ի հետ պայմանագիրն էլ վերջինը չի լինի: Ուրախ եմ, որ վերջապես մի թիմում կխաղամ Զլատան Իբրահիմովիչի հետ», նշել է Դեւիդ Բեքհեմը:

«Անժին» 35 մլն եվրոյով կգնի Վիլիանին

Դոնեցկի «Շախտյորի» բրազիլացի հարձակվող Վիլիանը հրաժեշտ տվեց ակումբակիցներին: Նա մեկնել է Մախաչկալա, որտեղ քառամյա պայմանագիր կկնքի տեղի «Անժիի» հետ: Վերջինս համաձայնվել է 35 մլն եվրո վճարել Վիլիանի տեղափոխության դիմաց:

Վիլիանը «Շախտյոր» էր տեղափոխվել 2007-ին: Թիմի կազմում նա 200-ից ավելի հանդիպումներ է անցկացրել, խփել 37 գնդակ: Վիլիանն իրեն հատկապես լավ դրսեւորեց չեմպիոնների լիգայում՝ դառնալով 4 գոլի հեղինակ:

Վիլիանը դեռեւս ամռանն էր ցանկանում հեռանալ «Շախտյորից»: Նա հայտարարել էր, որ ցանկանում է կարիերան շարունակել Անգլիայում, որտեղ նրանով հետաքրքրվում էին «Չելսին» ու «Տոտենհեմը»: Սակայն «Անժին» բրազիլացուն գայթակղեց բարձր աշխատավարձով՝ առաջարկելով 2,5 մլն եվրո: Այժմ Գուս Հիդինգի տրամադրության տակ կլինի Լասինա Տրաորե-Վիլիան-Սամուել էտո' Օ հարձակողական եռյակը:

«Շախտյորի» գլխավոր մարզիչ Միրչա Լուչեսկուն նշել է, որ ինքը փորձել է համոզել Վիլիանին չտեղափոխվել «Անժի», քանի որ ուկրաինական թիմում բրազիլացին ավելի մեծ բարձունքների կհասնի: Լուչեսկուի կարծիքով, Վիլիանը մեծ ճնշումների էր ենթարկվում գործակալի եւ իր հարազատների կողմից:

ԳՈՒՅԺ

Վախճանվել է օլիմպիական չեմպիոն Վլադիմիր Ենգիբարյանը

Երեկ Լոս Անջելեսում 81 տարեկան հասակում կյանքին հրաժեշտ տվեց Մելբուռնի օլիմպիական խաղերի չեմպիոն, Եվրոպայի եռակի եւ ԽՍՀՄ բազմակի չեմպիոն Վլադիմիր Նիկոլայի Ենգիբարյանը: Նրա վիրտուոզ տեխնիկայով, ակնթարթային ռեակցիայով, մրցակցին հաստատած հուժկու ու նպատակային հարվածներով բազմիցս հիացել են բազում երկրների մարզասերներ:

1956-ի Մելբուռնի օլիմպիական խաղերում երեւանցին ԽՍՀՄ առաջին բռնցքամարտիկն էր, որը նվաճեց օլիմպիական ոսկե դափնին՝ բացահայտ առավելությամբ հաղթելով ամերիկացի Ջո Շոուին, ֆրանսիացի Սոլյուդեն Լոուբերին եւ իտալացի Ֆրանկո Նենչիին: Ուշագրավ է, որ պարտվողները չեն տխրել, իսկ իտալացի մարզիկը նույնիսկ հայտարարել է, որ Ենգիբարյանի նման վարպետից կրած պարտությունը նշանակում է անցնել լավ դպրոց:

Վլադիմիր Ենգիբարյանը 263 հանդիպումներից տանուլ է տվել միայն 13-ը, իսկ 105 մենամարտ ավարտել է բացահայտ առավելությամբ: Երեւանցու բացառիկ մրցավարական շնորհն ու գործունեությունը նույնպես գնահատվեցին ըստ արժանվույն եւ նրան շնորհվեց միջազգային բարձրագույն կարգի մրցավարի կոչում:

Վլադիմիր Ենգիբարյանը ծնվել է 1932-ի ապրիլի 24-ն, Երեւանում: 1959-ին հիմնադրել է Երեւանի պատանի բռնցքամարտիկների հանրապետական դպրոցը, որի անփոփոխ տնօրենն էր մինչեւ 1995-ը, երբ բնակության տեղափոխվեց ԱՄՆ:

Վլադիմիր Ենգիբարյանը արժանացել է ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետի կոչման, մարզաձեւի միջազգային ֆեդերացիայի անդամի, ԽՍՀՄ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի, ՀՀ վաստակավոր մարզչի եւ վաստակավոր գործչի, ՀԱՕԿ-ի ոսկե շքանշանի :

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը եւ ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը Վլադիմիր Ենգիբարյանին շնորհել են (2009-ին) Հայաստանի եւ Արցախի բարձրագույն պարգեւներ:

2012-ին ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանի նախաձեռնությամբ Երեւան հրավիրվեց կաբվե ձեռնոցի փառահեղ վարպետը: Նրա 80-ամյակին նվիրված տոնական արարողությունը շուտով նշվեց եւ, բացի այդ, բռնցքամարտի դպրոցը անվանակոչվեց հիմնադրի՝ Վլադիմիր Ենգիբարյանի անունով:

ՀԱՕԿ-ի նախագահ Գագիկ Ծառուկյանը ցավակցական ուղերձ է հղել Վլադիմիր Ենգիբարյանի հարազատներին. «Ուրտի խոր ցավով տեղեկացա կաբվե ձեռնոցի անզուգական վարպետ, Մելբուռնի օլիմպիական խաղերի չեմպիոն Վլադիմիր Ենգիբարյանի մահվան մասին: Նրան համարում էին համաշխարհային բռնցքամարտի հեղափոխական, քանզի առաջինն էր, որ կոպիտ ուժին եւ բիրտ հարվածների փոխանակմանը հակադրեց նուրբ տեխնիկա եւ ռինգում տեղաշարժվելու յուրատեսակ ոճ: Նա միայն իրեն բնորոշ վարպետությամբ եւ խոսուն հաղթանակներով համաշխարհային մարզասերին է ներկայացրել բռնցքամարտի հայկական դպրոցը եւ տարածել նրա փառքը:

Հազարավոր այն պատանիներից մեկն եմ, ում բախտ է վիճակվել լինել նրա հիմնադրած ու ղեկավարած մարզադպրոցի սանը, հաճախ ունկնդրել նրա մասնագիտական դասերը, ականատեսը լինել նրա ցուցադրած տեխնիկատակտիկական տարրերին:

Անձամբ իմ եւ հայոց մարզաշխարհի մարդկանց անունից խորապես ցավակցում եմ Վլադիմիր Ենգիբարյանի ընտանիքին, հարազատներին ու բարեկամներին»:

Պրոֆեսիոնալ բռնցքամարտի սուպերմիջինքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոն Արթուր Աբրահամը եւս ցավակցական խոսք է հղել Վլադիմիր Ենգիբարյանի մահվան կապակցությամբ.

«Խոր վշտով ցավակցում եմ հայրենական սպորտի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ Վլադիմիր Ենգիբարյանի մահվան կապակցությամբ: Սա անդառնալի կորուստ է հայ մարզաշխարհի համար: Նա Մելբուռնի օլիմպիական խաղերի չեմպիոն էր, Եվրոպայի եռակի եւ ԽՍՀՄ բազմակի չեմպիոն, հիմնադրել է Երեւանի պատանի բռնցքամարտիկների հանրապետական դպրոցը, նրա եւ նրա դպրոցի սանների շնորհիվ բազմիցս տարբեր միջազգային հեղինակավոր մրցաստարեզներում մեր երկիրը առաջատար է հռչակվել: Վլադիմիր Ենգիբարյանը բոլորիս համար օրինակ է եղել եւ կմնա այդպիսին: Եվս մեկ անգամ խորապես ցավակցում եմ Ենգիբարյանի հարազատներին, ընկերներին, համախոհներին: Նրա հիշատակը մշտապես վառ կմնա հայ մարզաշխարհի պատմության մեջ»:

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն փետրվարի 3-ին, ժամը 14-ին հոգեհանգստյան արարողություն է կազմակերպելու Սուրբ Սարգիս եկեղեցում: Վլադիմիր Ենգիբարյանի հուղարկավորությունը նախատեսված է ԱՄՆ-ում:

Հաղթողը չորոշվեց

Ֆուտբոլային մրցաշրջանի մեկնարկին նախապատրաստվող «Փյունիկը» եւ «Ուլիսն» Ավանի ֆուտբոլի ակադեմիայի խաղադաշտում ընկերական հանդիպում անցկացրին: Հաշիվը բացեց Վիուլեն Այվազյանը՝ առաջ մղելով «Փյունիկին»: 2-րդ խաղակեսում ուլիսցի Արսեն Բալաբեկյանը վերականգնեց հավասարակշռությունը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ուշացած պատասխան՝ «Ազգի» ամանորյա շնորհավորանքներին

Յուրաքանչյուր տարվա վերջին «**Ազգի**» խմբագրությունը սկսում է ստանալ ամանորյա ավանդական շնորհավորանքի բացիկներ, նաեւ ընծաներ՝ օրացույցներ, գրասեղանային պիտույքներ, քաղցրավենիք կամ խմիչք: Այս տարին էլ բացառություն չէր եւ ինչպես միշտ, այս անգամ էլ շնորհավորանքներ եղան երկրի պետական-քաղաքական կառույցներից, կառավարությունից, նախարարություններից, Ազգային ժողովից, ոստիկանությունից, հասարակական ամենատարբեր կազմակերպություններից, մշակութային եւ կրթական օջախներից, օտարերկրյա դեսպանատներից, հոգեւոր կառույցներից (Մայր աթոռ Սբ. Էջմիածնից), տնտեսական գործունեությամբ զբաղվող ընկերություններից ու միավորումներից, նաեւ առանձին անհատներից՝ հայաստանցի եւ սփյուռքահայ: Սիրով ընդունում ենք շնորհավորանք-բարեմաղթանքները՝ փոխադարձելով եւ հարգելի պատճառներով ուշացած հայտնում մեր շնորհակալությունը, նաեւ մեր վերաբերմունքը՝ ստացված օրացույցների, ընծաների առիթով:

Իսկ օրացույցներ ստացել ենք «Արարատ» կոնյակի գործարանից, «Կենտրոնական բանկից»՝ երկուսն էլ գունային ճաշակավոր ֆոնով, ԿԲ-ինը սեփական հուշադրամների ձեւավորմամբ եւ դրանց համառոտ նկարագրությամբ: Էսթետիկ հաղորդակցում է աղահովել «Գաֆէսճեան արվեստի կենտրոնի» (սեղանի եւ պատի) եւ «Հայռուսգազարդի» (որից ստացել ենք նաեւ գրասեղանային գրքույկներ) օրացույցները՝ երկուսն էլ՝ գեղանկարչական «լուծումով», առաջինը՝ կենտրոնի ցուցանմուշների իլյուստրացիաներով, երկրորդը՝ հայ 4 գեղանկարիչների՝ տարվա եղանակները խորհրդանշող գործերով՝ Համլետ Մինասյան «Ջմեռային պատկեր», Մերուժան Խաչատրյան «Արարատը առավոտյան» (գարուն), Մինաս Ավետիսյան «Ամառ» եւ Սեդրակ Առաքելյան «Աշուն. մի անկյուն Երեւանում»: Մանկավարժական համալսարանը նույնպես 2013-ի օրերը ներկայացնում է գեղանկարչական գործերի ձեւավորումով՝ այս անգամ տարբեր տարիների համալսարանական նկարիչ-դասախոսների եւ ուսանողների գործերի ընտրությամբ: Հարուստ եւ ճոխ տպագրությամբ օրացույց է ստացվել Մայր աթոռ Սբ Էջմիածնից: Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամը ներկայացնում է Իրանում հայկական մշակութային-հոգեւոր հուշարձանների մի խումբ:

Ստացել ենք նաեւ Orange-ի «Բարեւ»-ը, մեծադիր օրացույց՝ Երեւան գարեջուր ՓԲԸ-ից, սեղանի օրացույց՝ Գերմանիայի դեսպանատնից: Ինչպես ամեն տարի «ՎիվաՍելի» փաթեթը ներկայացնում է սեղանի օրացույց, ընկերություն Կորպորատիվ սոցիալական պարտավորություն գրքույկը եւ «Աշխարհի հայկական հուշարձանները» գրքի 2-րդ հատորը:

Նորություն է «Շանթ» TV-ի՝ սեփական հեռուստաընկերության՝ երաժշտական եւ այլ ծրագրերից ընտրված կադրերի, հաղորդավարհաղորդավարուհիների, երգիչ-երգչուհիների լուսանկարներով կազմված օրացույցը:

Շնորհակալություն:

Մ. Ք.

Չորս «հայկական» հարց՝ ԱՄՆ նորանշանակ պետքարտուղարին

1-ին էջից

Քերրին պատասխանել է. «Միացյալ Նահանգները ընդունում է այն փաստը, որ Օսմանյան կայսրության մայրամուտին մեկուկես միլիոն մարդ է կոտորվել կամ մահվան դատապարտվել եւ ցավում է դրա համար: Այդ դեպքերը դարձան 20-րդ դարի ամենաահավոր վայրագություններից մեկը, եւ Միացյալ Նահանգները գիտակցում է, որ դա մեծ ցավ է Հայաստանի ժողովրդի, սփյուռքում ապրող հայերի, ինչպես նաեւ համամարդկային արժեքներ կրող բոլոր մարդկանց համար: ԱՄՆ նախագահն ամեն տարվա ապրիլի 24-ին հարգում է զոհերի հիշատակը, մենք երբեք չենք մոռանա պատմության այդ մռայլ էջը»:

Հարց տվող սենատորը, սակայն, այդպես էլ չլսելով «ցեղասպանություն» եզրույթը այդ օրինագծին ժամանակին կողմնակից հավանական պետքարտուղարից, որոշակիացրել է իր հարցը, թե Քերրին, որպես սենատոր, պատրաստվում է Ցեղասպանությունը ճանաչող օրինագծի ընդունումը, պետքարտուղար դառնալուց հետո կփոխվե՞ն արդյոք նրա կարծիքն ու հայացքները այս հարցի առնչությամբ: Քերրին պատասխանել է. «Պետքարտուղարի պաշտոնում հաստատվելու դեպքում իմ պարտականությունն է լինելու անաչառ ներկայացնել նախագահի ու վարչակազմի քաղաքականությունը: Ինչպես Բարաք Օբաման նշեց իր ապրիլքսանչորսյան ուղերձում՝ փաստերի ամբողջական, անկեղծ, արդարացի ճանաչումը բխում է մեր բոլորի շահերից: Նա նաեւ ընդգծեց, որ դեպի առաջ գնալն անհնար է առանց անցյալի փաստերը ճանաչելու, եւ կոչ արեց երկու ժողովուրդներին՝ առերեսվել սեփական պատմությանը: Եթե ես հաստատվեմ պետքարտուղարի պաշտոնում, ապա շարունակելու եմ մեծապես աջակցել բոլոր այն ջանքերին, որոնք ուղղված կլինեն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, այդ երկրների միջեւ խաղաղ, փոխշահավետ եւ բարգավաճ հարաբերությունների հաստատմանը»:

Քերրիին ուղղված հաջորդ հարցը վերաբերել է ոճրագործ Ռամիլ Սաֆարովին Իլհամ Ալիեւի կողմից ներում շնորհելուն, մասնավորաբար, թե արդյոք ի՞նչ պետք է անի ԱՄՆ-ը, որպեսզի սիրելի Իլհամ Ալիեւին՝ կրկին բանտարկել Ռամիլ Սաֆարովին: Քերրին հիշեցրել է, որ երբ Իլհամ Ալիեւը ներում շնորհեց Սաֆարովին, ԱՄՆ-ն անմիջապես իր մտահոգությունը հայտնեց. «Սաֆարովը դատապարտված էր դաժան պատության համար, ու ԱՄՆ-ն մտահոգված է, որ նա չի շարունակելու կրել իր պատիժը», ասել է Քերրին, այնուհետեւ ընդգծել, թե ԱՄՆ-ը, որպես Ռուսաստանի ու Ֆրանսիայի հետ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, շարունակելու է ջանքեր գործադրել ԼՂ հակամարտության կարգավորման ուղղությամբ: «ԱՄՆ-ը դատապարտում է բոլոր այն գործողությունները, որոնք կարող են լարվածություն հրահրել տարածաշրջանում եւ վտանգել խաղաղ կարգավորման գործընթացը: Եթե հաստատվեմ պետքարտուղարի պաշտոնում, ապա հնարավոր ամեն ինչ անելու եմ, որպեսզի օգնեմ կողմերին հասնելու հարցի խաղաղ կարգավորմանը», ասել է Քերրին:

Եվ վերջապես 4-րդ հարցը վերաբերել է Ստեփանակերտի՝ շահագործման պատրաստվող օդանավակայանին ու դրա շուրջը Ադրբեջանի բարձրացրած «ահաբեկչական աղմուկին»: Քերրին, եւս մեկ անգամ շեշտելով, որ պետքարտուղարի պաշտոնում հաստատվելուց հետո ինքն ամեն բան անելու է խաղաղ գործընթացը շարունակելու, դրան սպառնացող վտանգը դատապարտելու ուղղությամբ, ասել է. «ԱՄՆ-ը կարծում է, որ կողմերը հակամարտությունը պետք է լուծեն խաղաղ դիվանագիտական ճանապարհով: Վարչակազմը վճռականորեն դեմ է հանդես գալիս բոլոր այն քայլերին, որոնք կարող են մեծացնել լարվածությունը տարածաշրջանում եւ վտանգել խաղաղ կարգավորման գործընթացը»: Քերրին ընդգծել է նաեւ, որ Ադրբեջանի կողմից քաղաքացիական ինքնաթիռները ոչնչացնելու, դրանց սպառնալու հայտարարություններին «ԱՄՆ-ը, Ֆրանսիան եւ Ռուսաստանը՝ որպես Մինսկի խմբի համանախագահներ, արագ արձագանքեցին»:

ՀԱՇՎԵՇԱՐԴԱՐ ԳՐՈՂԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Չեն կարդացել, բայց դատապարտում են, կամ ադրբեջանական «հանդուրժողականություն»

«Այդ վեպը, ինչպես հայկական արշանագրությունները, այլեւս ջնջել չի լինի»

Հունվարի 31-ին «իլհամյուգենդը» գրող Ափրամ Այլիսլիի բնակարանի մոտ պիկետ էր կազմակերպել: «Ափրամ Այլիսլի, դու հայ ես», «Հեռացիր Ադրբեջանից» եւ այլ կոչեր էին հնչել: Դրան նախորդել էր իշխող կուսակցության երկու ֆունկցիոներների՝ Ալի Ահմեդովի եւ Մուբարիզ Գուրբանլիի կատաղի հարձակումը Այլիսլիի դեմ: Պատճառը Մոսկվայում անցյալ դեկտեմբերին հրատարակված՝ «Քարե երազներ» վեպն է, որտեղ Այլիսլին պատմում է 1919-ին Ագուլիսում եւ 1990-ին Բաքվում հայկական ջարդերի մասին:

Երեկ Այլիսլիի հարցը բուռն քննարկումների է արժանացել Միլլի մեջլիսի գարնանային նստաշրջանի անդրանիկ նիստում: Իշխող կուսակցության գործադիր քարտուղար պատգամավոր Ալի Ահմեդովը առաջարկել է Այլիսլիին զրկել ժողովրդական գրողի կոչումից եւ պետական պարգեւներից: Նիզամի Զաֆարովի կարծիքով, հարկ է գրողին «զրկել քաղաքացիությունից, թող գնա Երեւան եւ ինչ-որ մի եկեղեցում սպասավորի»: Նա միաժամանակ պահանջել է արգելել Այլիսլիի գրքերի տպագրությունն Ադրբեջանում:

Գրողի դեմ արտահայտվել են նաեւ Մուսա Գասիմովը, Գանիրա Փաշաեւան, Զահիդ Օրուջը: Միլլի մեջլիսի փոխխոսնակ Բահար Մուրադովան Այլիսլիին անվանել է «դավաճան»: Խորհրդարանի խոսնակ Օթքայ Ասադովը «քննարկումներն ամփոփել է բազմանշանակ դիտարկումով, որ բոլոր նրանց ծագումը, որ հանդես են գալիս Այլիսլիի պաշտպանությամբ, կասկածելի է»:

Փողոցային ակցիան կարելի է համարել «մի խումբ տարօրյուն երիտասարդների անհավասարակշիռ քայլ», իսկ Այլիսլիի դեմ նրա գրչընկերների ելույթները՝ «մասնագիտական նախանձի» կամ «հեղինակային չարացածության» դրսեւորում: Բայց երբ գրողի հարցը տեղափոխվում է երկրի օրենսդիր իշխանության նիստերի դահլիճ, պարզ է դառնում, որ «Քարե երազների» հեղինակի դեմ զորակոչվել է Ադրբեջանի ողջ իշխող վերնախավը:

Արտառոցն այն է, որ «Քարե երազները» հրատարակվել է, ինչպես ասվեց, անցյալ դեկտեմբերին: Եվ թե ինչո՞ւ են դրան Ադրբեջանում անդրադառնում ուշացումով՝ վկայում է, որ վեպի մասին խոսողները այն պարզապես չեն կարդացել: Ոմանք հենց այդպես էլ ասում են՝ «չեմ կարդացել, ծանոթ չեմ, բայց դատապարտում եմ» ... Ինչպես խորհրդային գրողների հավաքույթում էին ասում Պաստեռնակի «Դոկտոր Ժիվագո»-ի մասին՝ «ծանոթ չեմ, բայց գիտեմ, որ դա հակախորհրդային գործ է»:

Այլիսլիի դեմ արշավի արտաքին շղարը «ազգային դավաճանությունն» է, գրողի «համակրանքը հայերի եւ հայկականի հանդեպ»: Որքան էլ որ քարոզչական առումով դա մեզ ավելի ընդունելի թվա, ստիպված ենք ենթադրել, որ բուն պատճառն այլ է: Վեպում Այլիսլին ստեղծել է խորհրդային Ադրբեջանի առաջնորդի՝ Խազեթինի մռայլ-գրոտեսկային կերպարը: Ի դեմս նրա, կասկածից դուրս է, Իլհամ Ալիեւը եւ իշխող վարչախումբը ճանաչել են «համազգային առաջնորդ» Հեյդար Ալիեւին: Այդ դեռ բավական չէ, հերոսի շուրթերով Այլիսլին, նկատի ունենալով արդեն թոշակառու, ամառանոցում «միայնակ ապրող» նախկին խազեթինին, հարցում է.

«Ի՞նչ ես կարծում, նա Սումգայիթը կազմակերպել է, որպեսզի Մոսկվայից վրեժխնդի՞ր լինի»:

Ըստ ամենայնի, սա է Այլիսլիի դեմ հարձակումների հիմնական դրդապատճառը, այն, որ գրողը Ադրբեջանում ծավալված վակխանալիայի համար, թեկուզ անուղղակի, մեղադրում է Հեյդար Ալիեւին, ակնարկում նրա եւ «Մեծ բեյ»-ի, ակնհայտորեն՝ Աբուլֆազ Էլչիբեյի, միջեւ գաղտնի կապերի, միասնաբար իրավիճակը սրելու եւ զանգվածներին վայրագությունների մղելու գործողությունների մասին:

Գրողի դեմ կամ «Քարե երազներ»-ի շուրջն այս օրերի հրապարակումների մեջ ամենաբնութագրականը թերեւս Վագիֆ Սամեդօղլուի խոսքն էր. «Ես չորս տարի ԵԽԽՎ-ում աշխատել եմ Իլհամ Ալիեւի հետ: Հեռուստաէկրաններից նա երեւում է փափուկ-բարեհամբույր, բայց ես գիտեմ նրա զայրույթի ասիճանը, զայրույթ, որի համեմատությամբ Հեյդար Ալիեւը չափազանց մեղմ էր, ուղղակի՝ կարմիր մեխակ»: Եվ սա ասվել է ի հավելումն Ափրամ Այլիսլիի հանդեպ ունեցած «ընկերական սիրո» մասին զեղումների եւ տարակուսանքի, թե «Ափրամի ինչի՞ն էր պետք այդքան պատիվներից հետո նման բաներ գրել»:

«Եթե իմ դեմ այս ամենը շարունակվի, ես երկրից կհեռանամ», լրատվամիջոցներին մեկին ասել է Ափրամ Այլիսլին: Նրան, ամենայն հավանականությամբ, կսիրեն, որ հեռանա: Կզրկեն կոչումներից, քաղաքացիությունից: Բայց ճշմարտացի էր նաեւ Այլիսլիի քննադատներից մեկը, որի խոսքով՝ «այդ վեպը, ինչպես հայկական արձանագրությունները, այլեւս ջնջել չի լինի»:

Այո՛:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Երեւանի «Ադամանդ» ապրանքահումքային բորսայի հարթակում (հասցե՝ք.Երեւան, Ագաթանգեղոսի փ. 6/1, 5-րդ հարկ) 2013թ.-ի փետրվարի 19-ից յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 11.00-17.00 իրականացվելու են լուծարվող "Գեոմատակարար" ԴՓԲԸ-ի գույքի (սարքերի,սարքավորումների և տրանսպորտային միջոցների՝ ընդհանուր 575 անվանում) հրապարակային սակարկություններ (աճուրդային վաճառք):

Գույքը գտնվում է Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի տարածքում:

Գույքին ծանոթանալու հարցերով և այլ տեղեկությունների համար զանգահարել 091-49-15-27(Գրիգորյան); (010)56-31-15 կամ դիմել Բորսա:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 1.2.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: